№ 127 ԿԻՐԱԿԻ, 13 ՅՈՒՆԻՍԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 13 ՅՈՒՆԻՍԻ № 127

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ
6 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցեն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով):

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». TIFLIS, Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°" ֆիրմայի միջոցով՝ Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

„Մշակի" խմբագրութիւնը յիշեցնում է այն բաժանորդներին, որոնք վճարել են 5-ական րուբլի, շտապել ուղարկել մնացորդ 5 րուբլին, որպեսզի յուլիսի 1-ից լրագրի առաքման գործում ընդհատում տեղի չունենայ:

Թիֆլիսի Բօրսային Կօմիտէտի հսկողութեան ներքոյ գտնվող

Թիֆլիսի Բօրսային Արտէլի Վարչութիւնը

սրանով յայտարարում է, որ ՅՈՒՆԻՍԻ 10-ԻՑ և. թ. ԲԱՑՎԱԾ ԵՆ ԱՐՏԷԼԻ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐԸ: Այն անձերն ու հիմնարկութիւնները—թէ Թիֆլիսում և թէ օտար քաղաքներում, ինչպէս մասնաւոր, նոյնպէս և պետական—որոնք կը ցանկանան ունենալ արտէլչիկներ՝ իբրև պատասխանատու ծառայողներ առևտրական բոլոր շրջաններում, թող բարեհաճեն դիմել Բօրսային Արտէլի գրասենեակին՝ բօրսային օրերը՝ ԱՌ. ԺԱՄԸ 10-ԻՑ ՄԻՆՉԵՒ 2-Ը և ԺԱՄԸ 6-ԻՑ ՄԻՆՉԵՒ 8-Ը ԵՐԵԿ.—Բօրսա, Արմենեանսկի բազար, տ. Քաղ. Վարկ. Ընկ., տելեֆօն № 348.

ԹԻՖԼԻՍԻՑ ԵՒ ՕՏԱՐ ՔԱՂԱՔՆԵՐԻՑ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ ՍՏՈՐԱԳՐՎԵԼԸ, ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՆՈՆԱԴՐ. § 36-Ի, ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է:

(Կ. Ե.) առ. 730. 3—1

Ուսուցչական Միութեան ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

նշանակված է երկուշաբթի, յունիսի 14-ին, առաւօտեան 10½ ժամին Զուբալեանի դպրոցում:

Օրակարգն է. 1) 1909 թ. տեղեկագիր. 2) ընտրութիւն վարչութեան և վերստուգ. յանձնաժողովի անդամների և փոխանդամների և 3) ընթացիկ խնդիրներ:

733. 1—1

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿ. „ՇՈՒԿԵՐՏ և ԿՈՄ." ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Պետերբուրգի „ՍԻՄԷՆՍ եւ ԳԱԼՍԿԷ" ռուսական էլեկտրօ-տեխնիկական գործարանների ակց. ընկ., Բեռլինի „ՍԻՄԷՆՍ եւ ԳԱԼՍԿԷ" ակց. ընկ., Բեռլինի „ՍԻՄԷՆՍ ՇՈՒԿԵՐՏ-ՎԵՐԿԷ" ակց. ընկ., Կօլոմէնի մեքենագործական ընկ. եւ եղբ. „ԿՐՕՍԼԷՅ" անգլիական գործարանի ներկայացուցիչներ:

ՉԱՓՍԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	ՀՈՍԱՆՔԱՉԱՓ, ամպէրմէտրներ, վօլտմէտրներ և ամէն տեսակ հաշւեցոյց ապարատներ փոփոխվող և մշտական հոսանքի համար:
ԷԼԵԿՏՐՕ-ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	„ՌԷՆՏԳԷՆԻ" ապարատներ բոլոր սարքաւորումներով: Միասնող ապարատներ՝ ԿԱՈՒՍՏԻԿԻ, ԳԱԼՎԱՆԻԶԱՑԻԱՅԻ, ԷԼԵԿՏՐՕԼԻԶԻ-ՅԻ, ֆարադիզացիայի համար, եւ այլն:
ԱՎՏՕՄՕԲԻԼՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	Ավտօմօբիլներ «ՊՐՕՏՕՍ», էլեկտրաշարժ և բենզինաշարժ: „Մօտօրնի մակոյկներ": Ավտօմօբիլային պատկանելիքներ:
ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	Ջերմային շարժիչներ „ԴԻԶԷԼԻ"—հում նաւթի, մազութի համար և այլն, միանգամայն ձեռնտու: Գազային շարժիչներ «ԳԻՒԼԴՆԵՐԻ»: Նաւթային, կէրօսինային, գազային շարժիչներ „ԿՐՕՍԼԷՅԻ":

ՊԱՀԵՍՏՈՒՄ կան՝ դինամօ-մեքենաներ, էլեկտրաշարժիչներ, հաղորդիչներ, զանազան տեսակ նիւթեղէններ էլեկտրական կառուցուածքների համար և այլն:

ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ և ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐԸ ուղարկվում են բառաջին պահանջման:

Տելեֆօն № 533. Հասցէն հեռագիրների համար՝ Шукертъ, Тифлисъ.

№ 2. (Կ.) (առ.) 433. 26—5

Թիֆլիսի Ժողովարան

ԱՄԱՌԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՇԱԲԱԹ
տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ
ՉՈՐՍ ԵՐԵԿՈՅԹ

Երեքշաբթի օրերը՝ ԼԱՐԱՆՈՒԱԾ ԽՈՒՄԲ, ՍԱԶԱՆԴԱՐ, ՊԱՐԵՐ:

Հինգշաբթի և շաբաթ օրերը՝ ԼԱՐԱՆՈՒԱԾ ԽՈՒՄԲ:

Կիրակի օրերը՝ ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ և ՍԱԶԱՆԴԱՐ:

Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 րուբ., կանայք 50 կ.:

ԱԶԴ.—Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ երեկ. ժամը 6—8-ը՝ երեխաների համար—ՊԱՐԵՐ:

(Կ.) առ. 729. 0—1

Լոյս են տեսել և վաճառվում են

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

Վերջին աշխատութիւններից.

ՄՈԽՐՆԵՐԻ ՏԱԿԻՑ

Գինն է 40 կոպ.

ԱՆԴՈՒՆԴԸ

Գինն է 40 կոպ.

Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ», «Կենտրոնական» ու «Փարոս» գրախանութներին և հեղինակին՝ Бебутовская ул. № 60. Բաքւում՝ «Сотрудникъ» գրավաճառանոցին և Թօլիսում՝ «Արծիւ» ժողովրդական գրախանութին:

ԹԻՖԼԻՍԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(Ընկերութիւն Իսմայլովսկայա և Սվեատոպոլկ-Միրսկայա փողոցների, № 1, պաշտօնատան Օգնոոսովի)

կազմակերպելով, մայրաքաղաքի բարեգործական հաստատութիւնների օրինակով,

ԱՄԷՆ ՄԻ ՏԱՆ ԱՒԵԼՈՐԴ ԻՐԵՐԻ ԺՈՂՈՎԱՐԱՐՈՒԹԻՒՆ,

դիմում է քաղաքի ազգաբնակութեանը խնդրելով նուիրել զանազան հին զգեստներ, ինչպէս օրինակ՝ հին կրկնակօշիկներ և կօշիկներ, զանազան կտորեղէն, լրագրի թուղթ, հին երկաթ, պղինձ, ցինկ և այլ մետաղեայ լօմ, հացի կտորներ, ձմի ծմայորդներ, զանազան թիթեղեայ և այլ ամանիկներ, խողովակներ, շշեր և այլ ապակեղէն, զանազան չորեր ու սպիտակեղէն և այլն:

Չը պէտք է ենդվել ենչերի ոչ քանակից, ոչ որակից:

Բոլորն էլ վաճառվելու են և միջոցներ կը տան պահելու և կրթելու Թիֆլիսի աղքատ երեխաներին:

Նուիրված իրերը ստանալու համար կուղարկվեն յատուկ մարդիկ:

Տեղեկութիւնների համար դիմել գրասարապէս Իւ. Զալլիցին (Վելիկօկնեաժեսկայա, 46) և Մ. Բէլօզէրսկիին (Ծղնէթսկայա, 17, բն. 2):

(Կ.) (առ.) 386. 10—10

ԲԺԻՇԿ

Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.

Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.
Արսա. Արաղսկայա, տուն Միրիմանովի:
(Ե. Հ. Կ.) 725. 100—1

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքական նոր կառավարութեան համար մեծ քաղաքական նշանակութիւն ունի այն, որ նա կարողացաւ վերջ դնել ալբանական խլրտումներին:

Ալբանական ապստամբութիւնը մի ծանր փորձաքար էր, որ բաժին էր ընկել օսմանեան նոր կառավարութեան: Նորակազմ սահմանադրական ռեժիմի կառավարութիւնը պէտք է կարողանար ցոյց տալ, որ նա հեղինակաւոր ոյժ է և ընդունակ է կարգ պահպանել պետութեան մէջ, թոյլ չը տալով ոչ ոքի խախտել պետութեան ամբողջութիւնը:

Երկու տարի առաջ այդ կառավարութիւնը ցրիւ տուեց մի դժոխային սոսկալի դաւադրութիւն, որ նպատակ ունէր վերականգնել հին ռեժիմը Աբդուլ Համիդի միահեծանութեամբ:

Դա մի հոյակապ յաղթութիւն էր, որ տարաւ սահմանադրական կառավարութիւնը և վաստակեց անպայման մեծ հեղինակութիւն երկրի մէջ:

Այսօր այդ հեղինակութիւնը աւելի ևս ամրապնդվում է նոր յաղթութեամբ, որ նա տարաւ Ալբանիայում, զսպելով ալբանական ապստամբութիւնը:

Եւ օսմանեան քաղաքացիների մէջ սկսում է առաջ գալ վստահութիւն, որ կառավարութիւնը կարող կը լինի նոյնպէս զսպել քիւրդերին և ուրիշ վայրենաբարոյ տարրերին, եթէ վերջիններս փորձեն շարժումներ առաջ բերել Փոքր-Ասիայի լեռներում և դաշտերում, արիւնի բաղնիքներ պատրաստելով խաղաղ ժողովրդի համար:

Թիւրքահայ ազգաբնակութեան համար Նորակազմ օսմանեան կառավարութեան այդ յաղթութիւնները կը լինէին յոյսի և վստահութեան նշաններ, եթէ այդ նոյն կառավարութեան օրով տեղի ունեցած չը լինէր Ադանայի սարսափելի աղէտը իր երեսուն հազար զոհերով, մի աղէտ, որ կատարվել էր կարծես կառավարութեան հովանաւորութեան տակ:

Սակայն ալբանական յաղթութիւնների նման հանգամանքները ծնում են մի որոշ աստիճան նաև երկիւղներ: Ունենալով խոշոր և հեղինակաւոր ոյժ զսպելու ամեն մի խլրտում պետութեան ամեն մի անկիւնում, օսմանեան կառավարութիւնը պէտք է զգուշանայ ամեն մի քայլից, որ կարող է վտանգել տեղական ինքնավարական կուլտուրական հիմնարկութիւնները և նրանց կանոնաւոր զարգացումը:

Նոյն Ալբանիայում յետադիմական և աւատական ձգտումների հետ միասին ապստամբների մէջ կային նաև կուլտուրական ձգտումներ, օրինակ՝ մի հաստատ ցանկութիւն՝ տեսնելու ապահովված տեղական լեզուն և տեղական գրականութեան առաջին նախափորձերը:

Եթէ օսմանեան կառավարութիւնը իր յաղթական դափնիները ստանայ, խախտելով տեղական ժողովրդի կուլտուրական արդար պահանջները, այդ դէպքում այդ դափնիները երկար ժամանակ չեն մնայ անթառամ և կամաց-կամաց կը սկսի զարգանալ դժգոհութեան ոգին, որը կաճէ, կընդարձակվի և ժամանակով սպառնալի կը դառնայ կառավարութեան համար իր ներքին իմաստով, իր էութեամբ, իր կենսական պահանջների ոյժով:

Պետական խելացիութիւնը թելադրում է բաւարարութիւն տալ մեծ չափով տեղական արդար պահանջներին և զարգացնել տեղական ինքնավարական գործունէութիւնը, ամուր կապերով շաղկապելով ուժեղ տեղական միութիւնները ընդհանուր պետական մի կազմակերպութեան մէջ, որի իւրաքանչիւր մասը լինէր բարեկեցիկ և ուժեղ, իսկ բոլորը միասին համերաշխ և զօրաւոր:

Եւ ահա, երբ այդպիսի մի վստահութեան և հաւատի վրա հիմնված կը լինի կառավարութեան հեղինակութիւնը, այն ժամանակ նա կը լինի մի անխորտակելի ամրութիւն, որը համարձակ կարող է նայել իր ապագային, չը վախենալով ուրիշ ձախորդութիւններից:

Ա. Քալանթար

* * *

ՖԵՐԴԻՆԱՆԴ ԹԱԳԱՒՈՐԸ ՊԱՐԻԶՈՒՄ

Պարիզ, 11 յունիսի

Ֆերդինանդը ընդունեց դիպլոմատիական մարմնի ներկայացուցիչներին: Երեկոյեան Ելիսեան պալատում կայացաւ ճաշ ի պատիւ Ֆերդինանդի և Էլէօնօրայի: Ներկայ էին պալատների նախագահները, մինիստրները, դիպլոմատիական գործիչներ, գիտնական աշխարհի, գիտութեան և գեղարուեստի ներկայացուցիչները: Ֆալիէրը բաժակաճառ առաջարկեց, որով մաղթանք արեց Ֆերդինանդ թագաւորի պարթև մաքի և խաղաղասիրութեան վրա, որի յիշատակելի գահակալութիւնը պսակեց մի գեղեցկագոյն գործ, որ կարող է գայթակղեցնել մարդու պատուասիրութիւնը, որովհետև նրանում ազգային գիտակցութեան արտայայտութիւն կայ: Այնուհետև Ֆալիէրը մատնանշեց Ֆրանսիայի համակրանքը դէպի Բուլղարիան, որ թագաւորի հովանաւորութեան տակ այսուհետև ևս կը շարունակէ իր ձայնը բարձրացնել յօգուտ արդարութեան, սօցիալական առաջադիմութեան և խաղաղ զարգացման: Ֆերդինանդը պատասխան բաժակաճառով յիշեցրեց, որ «Ֆրանսիան Բուլղարիային դժուարին րօպէին ցոյց է տուել աջակցութիւն, Ֆրանսիան Արևելքում ծառայել է խաղաղութեան ու հաւասարակշռութեան էլ աւելի պանծալի գաղափարին, Ֆրանսիան և Բուլղարիան միացած են ազատութեան խորունկ սիրով: Բուլղարիան խոնարհվում է Ֆրանսիայի այն փառքի առաջ, որ ձեռք է բերված դարաւոր կռւով յանուն հումանիտար գաղափարների առաջադիմութեան: Ազատութեան ու իրաւունքի յաղթանակը խոնարհվում է գրականութեան, գիտնականների մեծ յայտնագործումների և արհեստի առաջ: Ֆրանսիան մեծահոգութեամբ բուլղարական փոքրիկ կուլտուրական ժողովրդի առաջ բացեց քաղաքակրթութեան գանձարանը, ազատութեան, արդարութեան և սօցիալական պրօգրէսի գաղափարները, որոնց ես միշտ կը ցանկանայի պահել ժողովրդի մէջ, համոզված՝ որ երկրի բարգաւաճումը կախված է ամենից առաջ մտաւոր կուլտուրայից: Ֆրանսիան կը գնահատէ նոր Բուլղարիայի ձգտումը՝ պահպանելու Բալկանում հաւասարակշռութիւնը, պահպանելու համաձայնութեան ոգին»:

Ճաշից յետոյ Ֆերդինանդը խօսակցութիւն ունեցաւ քաղաքական գործիչների հետ:

Բուլղարական զոյգի նախաճաշին ներկայ էին Լուբէն, Բրիանը և Պիշօնը:

Ֆերդինանդը թագուհու հետ՝ Ֆալիէր ամուսինների ուղեկցութեամբ՝ գնաց Օտէլդէվիլ, ուր քաղաքային խորհրդի նախագահը և նահանգապետը թագաւորական զոյգին մատուցին Պարիզի ազգաբնակութեան ողջունագիրը: (Հ. Գ.)

* * *

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնդոն, 11 յունիսի

«Դէյլի-Տելեգրաֆի» Պետերբուրգի թղթակիցը մի յօդուածով պնդում է, թէ այս օրերս պէտք է նոր ռուս-ճապօնական համաձայնութիւն ստորագրվի Մանջուրիայի երկաթուղիների վերաբերութեամբ:

Ռէյտերի գործակալութեան տեղեկութիւնների համաձայն, իբրեւ դրութիւնը Կրետէում լարուել է շնորհիւ այն հանգամանքի, որ կրետացիները մտադրութիւն յայտնեցին հետևել չորս պետութիւնների խորհուրդներին: Մեծ պետութիւնները ներկայիս քննում են Կրետէ մի ընդհանուր նոտա ուղարկելու հարցը, որով նորից առաջարկելու են թոյլ տալ մահմէդական պատգամաւորներին մասնակցել ազգային ժողովին առանց յունաց թագաւորին երդում տալու: Հովանաւոր-պետութիւնների մէջ լիակատար համաձայնութիւն է տիրում: Ներկայ բանակցութիւնները վերաբերում են բացառապէս նոր նոտայի խմբագրութեան: (Հ. Գ.)

Պարիզ, 11 յունիսի

Հաւասի գործակալութեանը հաղորդում են Աթէնքից, որ ազգային ժողովի ընտրութիւնները նշանակվելու են օգոստոսի 1-ին:

Հաւասի գործակալութեան տեղեկութիւնների համաձայն, գործադուլը հարաւային երկաթուղիների վրա վերջացել է: Ծառայողների գլխաւոր պահանջներին բաւարարութիւն է տրված: (Հ. Գ.)

Վիէննա, 11 յունիսի

Պատգամաւորների պալատը երրորդ ընթերցումից յետոյ ընդունեց 1910 թ. բիւջէն: (Հ. Գ.)

Սէրաեվօ, 11 յունիսի

Սէյմը ընդունեց մի բանաձև, որի մէջ, շնորհակալութիւն յայտնելով կայսրին սահմանադրութիւն շնորհելու համար, յայտնում է՝ որ իր հայրենասիրական և լօյալ պարտականութիւնն է զգում մատնանշել՝ թէ ներկայ սահմանադրութիւնը հիմունքներ չէ ստեղծում արդիւնաւէտ գործունէութեան համար, որ համապատասխանէ ժամանակի ոգուն և երկրի պահանջներին: (Հ. Գ.)

Սօֆիա, 11 յունիսի

Սլաւոն ժուրնալիստների համագումարը բացվում է յունիսի 21-ին և կը տևէ երեք օր: (Հ. Գ.)

Բեռլին, 11 յունիսի

Մէկսիկայից հեռագրում են, որ երկաթուղային կատաստրոֆայի ժամանակ սպանվել և վիրաւորվել են ընդամենը 37 զինուոր: (Հ. Գ.)

Պետերբուրգ.—Յունիսի 5-ին երեկոյեան արագ գնացքով Վիլնա մեկնեց Պետերբուրգի խուզարկու ոստիկանութեան պետ Վ. Ֆիլիպօվը, որի վրա դատական կարևոր գործերի քննիչ Ալէքսանդրօվը արտակարգ կարևոր յանձնարարութիւն է դրել Բուտուրլինի սպանութեան գործի առիթով:

Այս առաքումը կապ ունի O'Բրիէնի դէ՛Լասի նոր ցուցմունքների հետ, որոնք Բուտուրլինի թունաւորման քննութեանը տալիս են միանգամայն անսպասելի յեղաշրջում:

Վ. Ֆիլիպօվին ուղեկցում են խուզարկու մի քանի ոստիկաններ:

Վիլնայում ձերբակալվելու են մի շարք անձեր, որոնց մասնակցութիւնը Վ. Դ. Բուտուրլինի սպանութեան մէջ այժմ երևան է հանել դատական քննութիւնը:

* * *

ՎԱՐԱԳԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Վան, 2 յունիսի

Վարագի յօբելեանի որոշված օրը մօտենում է և նախապատրաստութիւններ եռանդով առաջ են տարվում: Հանդէսը պիտի բաղկանայ հոգեհանգստից, ճաշկերոյթից և ճառախօսութիւններից ու երգերից:

Հրաւիրվել են այժմեանից 300-ի չափ անձեր—հայ ու թիւրք պաշտօնեաներ, կրթական և գրականական ծառայողներ, վաճառականներ և ազգային ժողովների, զանազան կրթական հաստատութիւնների, քաղաքական կուսակցութիւնների և արհեստաւորների, մանր առևտրականների ներկայացուցիչներ: Սպասվում են դրսից հիւրեր:

Վանի բոլոր հայ ազգաբնակութիւնն անշուշտ նոյն օրը Վարագում կը լինի, գուցէ 20 հազարից աւելի: Կենտր. յանձնաժողովը, նոր անդամներով ուժեղացված, գործում է եռանդով: Յոբելեանական տօնը Վանի համար նորութիւն է և սպասվում է ժողովրդի լայն ու ոգևորված մասնակցութիւնը:

Մորակ

ԲԺՇԿԱՊԵՏ

ԱՒԵՏ. ԲԱԲԱՅԵԱՆԸ

ըստ սովորականին, յունիսի 1-ից մինչև սեպտ. 15-ը հիւանդներ ընդունելու է ԿԻՍԼՕՎՕԴՍԿՈՒՄ (Отель Бештау):

(Կ. Հ.) առ. 611. 10—7

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 5 յունիս

Սպանուած խմբագրին, Մէհմէդ Սամիի սպանիչին հետքը տակաւին կը մնայ մութի մէջ։ Առաջին բոպէներուն խուլ շշուկներ շրջեցան, թէ օսմ. կօմիտէի կողմէ վճռուած է այս սպանութիւնը։ Երկու օր ետքը՝ «Իշթիրաք» անուն թերթի մը մէջ նամակ մը հրատարակուեցաւ իբրև թէ սպանեալի կողմէ, որ կը յայտարարէր, թէ իրեն սպառնալիք եղած է կօմիտէի կողմէն և հաւանական կը գտնէ, որ ինքն ալ նախորդ տարի սպանուած Հասան Ֆէհմիի վախճանը ունենայ։ Ուստի կը փափագի, որ իր թաղումը անշուք ըլլայ, Վոսփորի մէկ դիրքին վրայ, ուրկէ կարելի ըլլայ ծովը դիտել, հովանաւոր ծառերու ներքև և աղբիւրի մը ջուրերուն մօտիկ։

Թերթին տնօրէն-տէրը խկոյն կասկածի ներքև ինկաւ ու կոչուեցաւ պատերազմական ատեանի։ Հրատարակուած նամակը, գրուած քիչ մը սկեպտիկ փիլիսոփայի մը ոճով, որ շատ անտարբեր կը նայի դէպի մահուան սպառնալիքները, քիչ մըն ալ բանաստեղծական ոճը իր գերեզմանի դիրքին ու տեղի մասին, ապացոյց են, թէ նամակը շարադրուած է ուրիշի մը ձեռքով, սպանութենէն ետքը, և որ ուրիշ բանի չի ծառայեր, թէ ոչ բուռն հոսանք մը առաջ բերել օսմ. կօմիտէի դէմ։

Այդ մարմինը, առաջին բոպէին, փութաց հերքում տալ այդ նամակին, յայտարարելով թէ կօմիտէն իր ծրագրէն դուրս նետած է արդէն ոճրագործութեան տրամադրութիւնները։ Տարբեր բան է, եթէ սպանիչը եղած ըլլայ կազմակերպութեան մը անդամը։ Այդ պարագային՝ գործ դրուած սպանութիւնը կունենայ զուտ անհատական հանգամանք, առանց ոևիցէ պատասխանատուութեան ենթարկելու կօմիտէն։ Ոճրագործը կը դատուի և կը պատժուի օրէնքին բոլոր խստութեամբը։

Դիտելու արժանի կէտը սա է, թէ «Սէդայի-Միլլէթ», սպանուած խմբագրին թերթը, յունական organe մըն էր. իր բուն խմբագրական պարունակութիւնը կը ներկայացնէր պատգամաւոր պ. Կոզմիտիսի կարծիքներն և հայեացքները երկրին քաղաքական հարցերու մասին։ Վերջերս Կրետէի մասին գրեց թերթը այնպիսի մտածումներ, որոնք կրնային անպատեհութիւններ ստեղծել խմբագրութեան շուրջը։ Թուրքերը հաւատացած էին, թէ Մէհմէդ Սամի պարզապէս դրամով ծախուած էր, իր անունն և թերթը գործիք ընելով յունական շահերու։

Իր սպանութեան յուզումին մէջ կրցած են մտնել գաղտնաբար յետադիմական ուժեր։ Այսօր յայտնի եղած է, որ «Իշթիրաք», կեղծ նամակը պարունակող թերթը, ձրի ցրուած է Պոլսի մէջ։ Բայց հակառակորդ կողմը տկար չէ. կը բաւէ ըսել, թէ սպանուած խմբագիրը իր անունը, իր թերթը, իր պատիւը դրած էր կրետական շահերու պաշտպանութեան ներքև։

Այժմ ամեն մարդ Կրետէով զբաղած է. դիւանագէտներէն, թերթերէն աւելի այդ հարցով իրենց օրը երիկուն կընեն կառապանները, նաւավարները, բեռնակիրները. հզօր դաշնակցութիւն մը բոյկոտ հրատարակած էր արդէն Սև ու Միջերկրական ծովերու նաւահանգիստներուն մէջ. մայրաքաղաքն ալ մտաւ անոր մէջ. ու խեղճ հելլէն նաւեր, բեռցուած, ճամբորդներով լիքը, կը կենան ծովափերու մօտիկ և կը սպասեն...

Կառավարութիւնը զգուշաւոր կերևի. յաջորդական հեռագիրներով, հրամաններով պատուէր կուտայ չդպչիլ հելլէններու ապրանքներուն, խանութպաններուն։ Եւ սակայն, ինչպէս գիտենք, գործերը շատ անգամ կը քալեն հակառակ պաշտօնական քաղաքականութեան, մանաւանդ Թիւրքիոյ մէջ, ուր նոր ըմբռնումներու չափ և գուցէ ալ աւելի տիրական են հին սովորութիւններ, հին ուղղութիւններ։

Զմիւռնիայի մէջ յոյն և Թիւրք յարաբերութեանց ձգտումը այնքան լարուած է նդեր, որ դժբաղդութիւնները հաւանական նկատուած են։ Այդ քաղաքին մէջ, որ յոնիական նահանգին՝ Թիւրքիոյ ամենէն գեղեցիկ քաղաքն է, յոյն բնակչութիւնը սկիզբէն ի վեր պահած է ոչ թէ միայն թուական, այլ և առևտրական, տնտեսական, ընկերական ուրիշ կարևորութիւններ։ Ամեն տարի՝ թէ Յունաստանէն, թէ Միջերկրականի այլևայլ կղզիներէն Զմիւռնիա կը մտնեն նոր ու թարմ յոյներ, բարքով, կեանքով, ճարտարութեամբ բոլորովին տարբեր՝ Թիւրքիոյ մէջ գտնուող ուրիշ յոյներէ։ Թիւրք և յոյն տարրերու մէջ անկանոն բաղխում մը կրնայ բաւական սուղի նստիլ նաև թիւրքերուն ալ։ Կըսուի թէ բոլոր յոյները լաւ զինուած են։

Պիրէօնի մէջ, նախորդ շաբթու, ռումանական շոգենաւի մը վրայ խուժանական յարձակում եղած է՝ փախցնելու համար յոյն-օսմանցի զինուորներ։ Եւ սակայն առիթէն օգտուիլ ուզելով՝ աւարի տուած են այն ամենը, ինչ որ թիւրքերու սեփականութիւն է եղած. ընդհանուր արժէք 4,000,000 ֆրանկ։ Յարձակման բուն շարժառիթը կը կարծուի յափշտակութիւն, որովհետև, կըսուի, կանխաւ լուր առնուած է, թէ օսմ. բանկը իր Աթէնքի ճիւղին այդ շոգենաւով ղրկած է եղեր 150,000 ոսկի։

Հաւանական է որ նիւթական յափշտակութիւնները կարգադրուին. միայն թէ դաս մը եղաւ գիտնալու, որ եթէ Թիւրքիոյ մէջ քմահաճօրէն տեղի ունենան հելլէններու դէմ անպատեհութիւններ, Յունաստանն ալ կրնայ պատասխանել իր ձեռքը ունեցած միջոցներովը։

Արտաքին գործերու մինիստրը, Րիֆաթ փաշա, որ նոր դարձաւ Եւրոպայէ, պարլամենտի մէջ հաշիւ տուաւ դիւանագիտական այն տեսակցութեանց մասին, որ ունեցած է Անգլիոյ և Ֆրանսայի մէջ։ Իր բացատրութիւնները հակիրճ են, ամփոփ և հանդարտ։ Իր եզրակացութիւնը սա է, թէ եւրոպական մեծ տէրութիւնները պիտի յարգել տան կղզին՝ Թիւրքիոյ վեհապետական իրաւունքները, ան, ինչ որ կը կրկնուի միշտ և կրկնուած է արդէն։

Ալբանիա և Կրետէ, անհատնելի երկու հարցեր, որ կը զբաղեցնեն այժմ Թիւրքիան ամենէն աւելի, մանաւանդ վերջինը։ Տեղական ոստիկանութիւնը ամեն օր ձեռք կանցնէ կասկածելի յունաստանցի մը՝ վնասակար թուղթերով։

Թիւրքերու բաղձանքն է թռչիլ դէպի Կրետէ, դէպի Յունաստան։ Ու ինչքան ցանկալի է դուռներ բանալ նոր արիւններու, որոնց ծարաւի են։ Ես կը կարծեմ, թէ հայրենասիրութենէ աւելի՝ արիւնի և թալանի խանձն է, որ կը գրգռէ մեր ասիացի այդ հայրենակիցները։ Ոչ նուազ դեր ունի կոյր մոլեռանդութիւնը, որ ամենէն հզօր ազդակը եղած է ցարդ խուժանին մէջ։ Ու այնքան ուժգին է անոր թափը, որ եթէ այսօր միջոց տրուի, առանց սպասելու օրինաւոր փոխադրանաւերու, կը նետուին ամեն տեսակ ողորմելի լաստերու վրայ և ճամբայ կելլեն դէպի կրետական ափունքներ, գրգռուած՝ հեռապատկերէ մը, թէ այնտեղ արիւններ պիտի թափեն Աստուծոյ փառքին համար, շերիաթի սիրուն համար։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

—

Ուրբաթ, յունիսի 11-ին, կայացաւ Հայ Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկ. տարեկան ընդհանուր ժողովը։

Ներկայ էին ընկերութեան անդամներ և հիւրեր թւով 45։

Ընկերութեան նախագահ Ա. Քալանթար, բանալով նիստը, յայտարարեց, որ ներկայ նիստի համար պէտք է ընտրել յատուկ նախագահող, որովհետև տարեկան հաշուետուութեան նիստ է։

Նախագահող ընտրվեց Հ. Առաքելեան. քարտուղար Ա. Աթանասեան։

Կարդացվեց անցեալ ընդհանուր ժողովի արձանագրութիւնը և հաստատվեց։

Այնուհետև կարդացվեց ընկերութեան տեղեկագիրը, որ պարունակում էր իր մէջ ամփոփ հաշուետուութիւն ընկերութեան մի տարվայ գործունէութեան մասին։ Տեղեկագիրը, որ տպագրված էր, բաժանվեց ներկայ եղողներին։

Ժողովը աչքի առաջ ունենալով վարչութեան բեղմնաւոր գործունէութիւնը որոշեց յայտնել իր շնորհակալութիւնը վարչութեան, ցանկանալով որ նա և առաջիկայում գործի նոյնպէս եռանդով և յամենայն դէպս աւելի պակաս չը գործէ, քան նա արել է հաշուետարում։

Վիճաբանութեան առարկայ դարձաւ տնայնագործական արհեստի զարգացման խնդիրը և արվեցին առաջարկներ գործագործութեան բարւոքման և առհասարակ արդիւնքների վաճառահանութեան վերաբերութեամբ։

Հաշիւը և նախահաշիւը մանրամասն քննութիւնից յետոյ հաստատվեցին։

Վարչութեան անդամներ ընտրվեցին Յ. Փիրալեան և Գ. Խարազեան, վերստուգող յանձնաժողովի անդամներ՝ Ա. Վարդապետեան, Ս. Խարազեան և Ա. Եզեկեան։

Այնուհետև Ա. Քալանթար զեկուցեց, որ ընկերութեան վարչութիւնը Վարագի յոբելեանի առիթով պատրաստել է մի շնորհաւորական ուղերձ և ցանկանում էր ուղարկել մի յատուկ անձ, որ կարողանար իբրև մասնագէտ օգտակար լինել իր ցուցմունքով մշակելու Վարագի գիւղատնտեսական դպրոցի ծրագիրը. բայց անկարող եղաւ այդ իրագործել, որովհետև չը գտաւ ազատ անձեր այդ նպատակի համար։ Ընդհանուր ժողովը, մեծ համակրութեամբ վերաբերվելով շնորհաւորական ուղերձին, կանգ առաւ յատուկ անձ ուղարկելու առաջարկի վրա և որոշում կայացրեց՝ տալ վարչութեանը լիազօրութիւն, որ եթէ նա կը գտնէ յարմար անձ՝ ուղարկի նրան Վանի և Վարագի շրջանը որոշ ծրագրական յանձնարարութիւններով։

Նիստի ժամանակ պարզվեց, որ Ե. Լալայեանը յաջորդ օրը ճանապարհվելու է Վան, ուստի որոշվեց լիազօրել նրան թարգման լինելու ընկերութեան կողմից։

Վերջում Ա. Աթանասեան զեկուցեց իր դէպի Ալէքսանդրապօլ կատարած ճանապարհորդութեան և այստեղի ճիւղի անդամների հետ կայացրած խորհրդակցական նիստի մասին։ Ալէքսանդրապօլ քաղաքը արդէն վերջնականապէս որոշել է տալ Հայ Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկ. 20 դեսեատին հող փորձադաշտ հիմնելու համար։ Առաջիկայում ընկերութիւնը պէտք է մշակի ապագայ իր գործունէութեան ծրագիրը։

Միւս զեկուցումները յետաձգվեցին միւս նիստերի համար։

Ամառվայ ամիսների համար լիազօրութիւն տրվեց ընկերութեան նախագահ Ա. Քալանթարին և քարտուղար Ա. Աթանասեանին՝ կարգադրելու ընկերութեան գործերը և զեկուցելու իրանց արածի մասին աշնանը վարչական և ընդհանուր ժողովներին։

Ժամը $10^{1}/_{2}$-ին նիստը յայտարարվեց փակված։

ՕԳՆԵՑԷՔ

—

Այսօր փոխադրեցինք Պոլսի պատրիարքին ևս 250 ր., որ գոյացած է «Հայի կոոր Չէյթունցուն» ժողովածուից։ Ուրեմն ընդամենը մենք փոխադրել ենք մինչև այսօր 2250 րուբլի։

Իսկ կարիքը մեծ է, ծով։ Վերջին մեր տեղեկութիւնները վհատեցուցիչ են։ Սովը սաստկանում է։ Սովատանջ մեռնողների թիւը մեծ է։ Մանաւանդ Մարաշում սովը սարսափելի է։

Մենք ուղարկել էինք քանի հարիւր օրինակներ մեր ժողովածուից «Մշակի» խմբագրատունը։

Վաճառվել է միայն 30 հատ։

Միթէ հարուստ «քաղաքում» ապրող հայերը չեն կարող 2 րուբլի տալ մի օրինակ գնել և դրանով գոնէ մի որոշ չափով օգնել սովեալներին։ Իսկ այն պարոնները, որոնց մենք ուղարկել էինք մեր ժողովածուն, միթէ պէտք է նրանց յիշեցնել նրանց սուրբ պարտքը։

Օգնեցէք սովեալներին, և սովեալների Աստուածը ձեզ կօգնէ։

Մենք մոռացել ենք մեր սովեալներին, միթէ մոռացել ենք և մեր Աստուածը։

Մենք սպասում ենք, որ Ամերիկան օգնէ։ Ամերիկան հեռու է, նա էլ իր կարիքները, իր կարօտեալներն ունի։

Մենք սպասում ենք, որ մեր հարուստները օգնեն։ Բացի մի քանի մեր յայտնի հարուստներից, միւսները անտարբեր են դէպի կարօտեալները։ Բոլոր հարուստները իրար նմանում են և հայերը բացառութիւն չեն կազմում։

Կուշտը քաղցածին մանր կը բրդէ։

Դարձեալ միայն աշխատաւորները—մեր միակ յոյսերն են։

Օգնեցէք։ Գր. Չալխուշեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Մանգլիս, 9 յունիսի

Մօտերքիս մի քանի հայեր և վրացիք, խորհրդակցելով իրար հետ, ձեռնարկում են հասարակական մատաղ սարքել, յայտարարելով որ այդ անում է հայ և վրացի հասարակութիւնը։ Մարդիկ տնից տուն ման գալով ժողովարարութիւն էին արել, ոմանց մօտ էլ ծառայի ձեռքով էին ուղարկել մի թերթ, որ նուէր տուողները գրեն իրանց ազգանունները։ Հաւաքվել է 50 ր.։ Պատրաստել էին մի շատ անհամ մատաղ։ Տեղացիները դժգոհ էին մնացել։ Պատարագ է լինում հայոց եկեղեցում։ Հայ քահանան պատարագից յետոյ, չը սպասելով վրացի քահանային, շտապում է օրհնել մատաղը։ Գալիս է վրացի քահանան։ Երևի թէ երկու քահանաները միասին պիտի օրհնէին մատաղը, բայց հայ քահանան մի առանձին քաջութիւն է համարում օրհնել մատաղը առանց միւս հոգևորականին։ Վրացի քահանան մնում է դժգոհ։ Վրացիք լաւ են։ Հայերը չեն պարզում, թէ ով է մեղաւորը, որի շնորհիւ անբաւականութիւն է տեղի ունեցել։ Տեղիս երկու ազգութիւնները ապրում են իրար հետ սիրով, առիթ անգամ չը կայ իրարից նեղանալու։

Պարզենք մի քանի իրողութիւններ։ Մանգլիսի հայ և վրացի հասարակութիւնը չէ ընտրել մատաղ սարքողներին։ Սրանք ինքնակոչ մարդիկ էին, որոնք հասարակութեան ֆիրմայի տակ գործում էին։

Խելահաս մարդիկ շարունակ պնդում են մի ճշմարտութիւն, որ հարկաւոր է միշտ ի նկատի ունենալ. դա այն է, որ հասարակութեան համար անելիքը պէտք է առաջարկել հէնց իրան հասարակութեանը, որ նա մշակէ և իրագործէ այն, ինչ որ անհրաժեշտ է, օգտաւէտ և գովելի։ Գործիչները չէին հասկանում մատաղ սարքելու բուն միտքն ու նշանակութիւնը, մանաւանդ երբ երկու ազգութիւններ միատեղ պիտի կատարէին այդ հնադարեան աւանդութիւնը։ Հետևապէս, եթէ մեծ դժգոհութիւն և մի որևիցէ անկարգութիւն ստեղծվէր, մեղաւորը ոչ թէ հայ կամ վրացի հասարակութիւնն էր, այլ իրանք ձեռնարկողները։

Ցանկալի կը լինէր, ի հարկէ, տեսնել երկու ազգութիւնները միատեղ ուրախանալիս և գործելիս։ Ուստի թող երկու հասարակութիւններն էլ հաւաքվեն միասին և խորհրդակցեն անելիքի, տնտեսականի և այլ փափուկ հարցերի մասին։ Թող ընտրեն իրանցից մի քանի մարդիկ և նրանց յանձնեն գործ կատարելը, լինի՛ այդ մատաղ կամ ուրիշ բան։ Եթէ այսպէս արած լինէին, երկու հասարակութեան սերտ բարեկամ լինելու ցանկութիւնները իրագործված կը լինէին, մի բան՝ որը ոչ ոք չը պիտի մոռանայ։ Այն ժամանակ անշնորհք ժողովարարութիւն չէին անի, շատ փող կը հաւաքվէր, բացի մատաղից մի ուրիշ բարեգործութիւն ևս արած կը լինէին, առանց մսի մատաղ չէին պատրաստի, մատաղը ծաղր ու ծանակ չէր դառնայ, ընտրված մարդիկ հաշիւ կը տային խառն ժողովին և և ոչ թէ այնպէս կը վարվէին, ինչպէս այժմեան կարգադրիչները, որոնք չեն ասում մատաղափող տուողներին, թէ ինչպէս է ծախսվել 50 րուբլին։ Կարգ ու կանոն կը սահմանվէր, որ մատաղը երբէք գինի և արաղ չը դառնայ և բաժանվէր համահաւասար և ամենայն արդարութեամբ և ոչ թէ այնպէս, ինչպէս այժմս. մէկը ստանում է մի բաժին, միւսը՝ տասը։ Ի միջի այլոց չէին մոռանայ մեր եկեղեցուն ևս բաժին հանել, որովհետև նա սոված է, աղքատ և մերկ։ Քահանաները կը կատարէին պարտ ու պատշաճը և չէին համարձակվի թշնամութիւն սերմանել։

Հայ քահանան նոյնանման վայրագութիւն է կատարել անցեալում Թօնէթ գիւղում։ Ջրօրհնեաց տօնին սովորութեան հակառակ շուտ է անում, խաչը գցում է այն ջուրը, ուր մշտական վրացիք էին գցելիս եղել։ Քիչ էր մնացել՝ որ մեծ տօնը ողբ և արեան հանդէս դառնար։

Վերջապէս, երկու հասարակութիւններն էլ կը տեսնէին իրանց ընտրածների արարքը և կը կարողանային գնահատել, թէ ով է արժանի յարգանքի, պատւի և հաւատարմութեան։

Տ. Ե.

—

Գանձակ, 8 յունիսի

«Մշակին» արդէն հաղորդված էր Գանձակից՝ այստեղի ս. Լուսաւորիչ եկեղեցու ծխ. ուսումնարանի նորակառոյց շէնքի օրհնութեան մասին, որ տեղի ունեցաւ ամսիս 6-ին։ Ինչպէս յայտնի է, այդ շէնքը 35,000 ր. է նստել բարերար Ն. Դ. Աֆանասեանի վրա։

Աֆանասեանը, բացի այդ դպրոցի շինութիւնից՝ հետևեալ նուիրատուութիւններն է արել զանազան ժամանակներում. 1) 5000 ր. ս. Լուսաւորիչ եկեղեցու կաթուղիկէի շինութեան համար. 2) 30,000-ից աւելի արժեցող մի շինութիւն, ուր խնամվում են անխտիր բոլոր ազգութիւնների պատկանող հիւանդները. 3) հայ-թաթարական կոտորածի ժամանակ երկու վագոն ալիւր՝ չքաւորներին բաժանելու համար։ Բացի դրանցից նա արել և անում է շատ այլ մասնաւոր բարեգործութիւններ։

Ամսիս 6-ի երեկոյեան, յիշեալ դպրոցի օրհնութիւնից յետոյ, տեղիս կրուժոկի պարտէզում զբօսանք կար նոյն դպրոցի օգտին։

Նշանակալից է այն հանգամանքը, որ հոգաբարձութեան անդամները համերաշխօրէն առաջ են տանում իրանց ստանձնած պաշտօնը։

Գանձակեցի

—

Վարդաշէն, 3 յունիսի

Մայիսի 31-ին, կիրակի օրը, տեղիս ծխ. դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ աշակերտական հանդէս-ակտը։ Հանդէսի ծրագիրը բաղկացած էր երկու բաժիններից։ Արտասանվեցին հայերէն, ռուսերէն ոտանաւորներ ու երգվեցին միաձայն ու երկձայն խառն ժողովրդական երգեր։ Թէ գրական մասը և թէ երգեցողութիւնը անցաւ լաւ։ Առաջին բաժնում հոգաբարձութիւնը հաշիւ տուեց։ Հոգաբարձական հաշուետուութիւնից երևաց, որ այս տարի դպրոցը ունեցել է 1380 ր. ելք, 1280 ր. մուտք, ուրեմն դպրոցը 100 ր. պարտ է մնում ուսուցիչներին։ Ցանկալի է, որ այդ բացը ծածկվէր մի ներկայացումով։ Երկրորդ բաժնում խօսեց դպրոցի աւագ ուս. Խ. Աւդալբէգեանը, շեշտելով ուսման անհրաժեշտութիւնը արդի կեանքում և ծնողների պարտականութիւնը իրանց սաների վերաբերմամբ. նա յայտնեց նաև, որ եկող տարվանից բացվում է չորրորդ բաժանմունք։ Դա պատիւ է բերում Վարդաշէնի հայ հասարակութեան. ուրեմն այս տարի Վարդաշէնը մի քայլ առաջ է։ Վարդաշէնի գիտակից տարրը, ըմբռնելով գիտութեան նշանակութիւնն ու դպրոցի անհրաժեշտութիւնը, ձեռք-ձեռքի տուած գործում

ՖԷԼԻԷՏՕՆ

ՔՍԱՆԵՒՉՈՐՍ ԴԻԱԿՆԵՐ

—

Ընթերցող, կարդացէ՛ք դուք Յովնանեան դպրոցի ուսուցիչ Ա. Աբեղեանի բաց նամակը «Հորիզոնում»։

Անշուշտ կարդացիք։

Կարդացի և ես։ Կարդացի, կարդացի և երբ հասայ վերջին տողերին՝ աչքերս լցվեցին արտասուքով և ես... լաց եղայ։

Եւ ինչպէս չը լալ ու չը սոսկալ, երբ դուք մի դժբաղդ առաւօտ իմանում էք, որ Յովնանեան օրիորդաց դպրոցում, նախկին գիշերը, ժողովրդից ընտրված 5 հայ հոգաբարձուներ թեմական առաջնորդի հետ միասին, փոխադարձ համաձայնութեամբ, կազմել են մի սոսկալի դաւադրութիւն և... մորթել են 24 հոգի՝ իրանց ուսուցիչ-ուսուցչուհիներին. մորթելը բաւական չէ. դրանից յետոյ էլ դրանց դիակները տարել-գցել են փողոց... և այն էլ Բէհբութեան փողոցի նման մի բանուկ փողոց...

Ահա այդ եղեռնագործութեան մասին է պատմում մեզ նա ինքը՝ դիակներից մէկը՝ Արտ. Աբեղեանը։

Բայց հրաշքը դրանում չէ, այլ նրանում, որ, ինչպէս ասում են տեսնողները, այդ նոյն դիակները իրանց սպանման յաջորդ օրերում, մինչև այսօր, ամենայն օր, կարծեմ, երկու անգամ բարձրանում են իրանց տեղերից և, մտնելով Յովնանեան դպրոց, բուռն ցասումով լի ժողովներ են կազմում, բաց ու փակ նամակներ են խմբագրում, տպագրում «Հորիզոնի» մէջ, էջմիածնի պատգամաւորներին ուղարկում, հեռագիրներ խփում և այլն, և այլն. այսինքն շարունակում են ապրել մի աւելի կենդանի և եռուն կեանքով, քան այդ կարող էին անել և արել են, երբ այդ դիակները ենթարկված չեն եղել հոգաբարձութեան սրերին...

Լսելով այս բոլորը, ակամայ յիշում եմ յայտնի բալլադան.

Въ двѣнадцать часовъ по ночамъ
Изъ гроба встаетъ императоръ,

և այլն։

Միթէ նոր են այդ դիակները, միթէ առաջին անգամն է, որ հայ վարժապետն ու վարժուհին գրչի մի շարժումով, մի երկու ժամվայ ժողովով փողոց են նետվում որպէս դիակներ։

Ոչ. յիսուն տարվայ պատմութիւն է դա, որ ամենասովորական և օրինական կերպով այսօր կրկնվում է, ի միջի այլոց, նաև Յովնանեան դպրոցում։

Յիսուն տարի շարունակ հայ ուսուցչութիւնը ամեն մայիսին բռնվել է հոգաբարձութիւնների կողմից և որպէս դիակներ փողոց է շպրտվել։

Յիսուն տարի։

Յիսուն տարի տեսել ենք մենք այդ, բայց... ոչ մի վայնասուն, ոչ մի բողոք, որ յիշեցնէր այսօրվայ «Յովնանեան սուգը», նրանց լաց ու արտասուքը։ Այո, տեսել ենք վռնտված հայ ուսուցչին և ուսուցչուհուն գիւղերում ցեխի ու կեղտի մէջ թաւալված, մանր ու մեծ քաղաքների մայթերի ու փոշիների մէջ կծկված, տեսել ենք ճանապարհներին՝ քօչ ու բարխանով՝ և անտարբեր անցել մօտից և միայն երբեմն՝

— Խեղճ վարժապետներ, խեղճ վարժուհիներ...—ասելով ենք բաւականացել։

Այսպէս՝ յիսուն տարի շարունակ։

Իսկ այժմ. այսօր արդէն ուրիշ բան է. այսօր մենք շանթ, կայծակ, նողկանք ու նզովք ենք թափում Յովնանեան դպրոցի հոգաբարձութեան գլխին, ստորագրութիւններ ու բողոքագրեր ենք ժողովում ամեն կողմից, պատգամաւորութիւններ ուղարկում էջմիածին և այդ բոլորը թափում... միմիայն Յովնանեան դպրոցի հոգաբարձութեան գլխին։

Եւ գիտէք ինչի. ոչ թէ նրա համար, որ մենք այսօր աւելի գիտակից դարձանք, աւելի սրտոտ, սրտացաւ, դպրոցասէր. ոչ. այլ նրա համար, որ քսանևչորս դիակները հասարակ վարժապետներ չեն, մի յետ ընկած գիւղում՝ Շամշադինում կամ Լօռում, Սիսիանում կամ Դարալագեազում, այլ Թիֆլիսում, այն էլ Յովնանեան դպրոցում։

Այսօրվայ վռնտվածները ուսուցչութեան գեներալներն են. իսկ այնտեղ գիւղերում՝ հասարակ զինուորներ, рядовые, որոնց կարելի էր ամենափառաւոր կերպով դիականացնել... և... այդ դիակների մօտից հանգիստ խղճով, բաց աչքերով անցնել և նոյն իսկ ոչինչ չասել և ոչ մի հասարակ ափսոս...

Աւելին կասեմ. որովհետև այսօրվան 24 հոգին մեռած են և ոչ ձերոնք կամ օտարներ։

Ահա թէ ինչումն է Յովնանեան վայնասունի բուն գաղտնիքը։ Ահա թէ ինչու ես, իմանալով այս բոլորը, հանգիստ խղճով անցնում եմ այդ դիակների առաջից և ասում.

— Դուք արժանի էք ձեր վիճակին։— Դուք դիակ էիք ոչ թէ յունիսի 2-ից. ոչ. այլ հէնց ձեր ծնված օրից. դիակ էիք, որովհետև մինչև որ հերթը չը հասաւ ձեր սեփական կաշուին, դուք ճիչ ու աղաղակ չը բարձրացրիք այն հարիւրաւոր հասարակ հայ վարժապետների համար, որ ամեն մայիս, յիսուն տարի շարունակ, փողոց են նետվել և փողոց են նետվում։

Տեսնում եմ և ասում.

— Ո՜վ Յովնանեան դպրոցի 24 դիակներ, ձեր վայնասունով մի ծաղրէք յիսուն տարի տանջված հայ ուսուցչութեանը, կոմէդիաներ մի սարքէք. մենք գիտենք ձեզ վաղուցվանից. երկու տարի առաջ, երբ հէնց ձեր միջից դուրս շպրտվեցին չորս-հինգ հոգի... դուք տեսաք այդ, տեսաք և լռեցիք, նոյնիսկ շատ օրինաւոր համարեցիք այդ...

Եւ ահա մեզ՝ հասարակութեանն ու էջմիածնին մնում է մի բան.

Ամենալուրջ միջոցներ ձեռք առնել, որ գոնէ այսուհետև և ոչ մի տեղ և ոչ մի դէպքում հայ ուսուցիչն ու ուսուցչուհին, այրուբենի այդ կարապետները, երբ իրանց այրուբենը լաւ են կարդացնում, ոչ միայն դուրս չը շպրտվեն, այլ ապահովվեն և հաստատ իմանան, որ ոչ մի դէպքում նրանք դիակ դառնալու, փողոց շպրտվելու բաղդին չեն արժանանալու...

Իսկ Յովնանեան դպրոցի դիակներին թողնենք, որ նրանք փորձվեն այս դառն դասից և դադարեն գոնէ այսուհետև մեր ուսուցչական կեանքի մէջ բարոյական դիակների դեր կատարելուց...

Սալ-Ման

է իր միակ մխիթարանքի՝ դպրոցի շուրջը։

Մանկունի

—

Մովսէս գիւղ (Շամշ. գ.), 25 մայիսի

Վաղուց է ինչ մեր գիւղացին ձանձրացել է լսելու տէր-Յովհաննէսի մասին. Նրա լկտի արարքների առաջ ականջ կը փակի ամէն մի շիտակ մարդ. ո՞րը թւենք նրա կեղտոտութիւններից, ո՞րը պատմենք նրա քաջագործութիւններից։ Լրագրի սուղ էջերը բաւականութիւն չեն տայ այդ բոլորին։ Եւ գիւղացիները գուցէ էլի մի կերպ եօլա գնային նրա հետ, եթէ նա բարոյականութեան չափ ու սահմանից դուրս գալով չը նսեմէր անբարոյականութեան գիրկը՝ արատաւորելով և ուրիշների անունները։

Ի՞նչ անուն կը տաք այն քահանային (գործակալին), որ բացի նրանից, որ իր քահանայական պարտականութիւնները չէ կատարում, մղում է նաև գիւղացիներին դէպի անբարոյականութեան անդունդ... Գիւղացիները շատ անգամ են նկատել նրան այդ կեղտում և զգուշացրել են. սակայն նա այդ բոլորը արհամարհել է։ Մայիսի 1-ին օրը ցերեկով նկատում են նրան անբարոյականութեան մէջ։ Եւ այս անգամ գիւղացիների համբերութեան բաժակը լցված լինելով չեն կարողանում տանել։ Այդ առիթով խօսվում է ամբողջ գիւղում և մի օր, երբ Յովհ. Աւալեանի տանը հաւաքված են լինում գիւղի երիտասարդներից մի քանիսը, որտեղ լինում է նաև գիւղի տանուտէրը, ներս է մտնում և տէր-Յովհաննէսը։ Այստեղ խօսք է բացվում տեղի ունեցած դէպքի մասին, և մեր «արժանապատիւ» քահանան փողոցային հայհոյանք է թափում գիւղի բոլոր կանանց հասցէին։

Այդ հայհոյանքները մի կայծ էին՝ էլեքտրականացած հասարակութիւնը բոցավառելու։ Եւ հետևեալ օրը, Համբարձման տօնին, գիւղացիք աւելի լաւ են համարում քահանային եկեղեցում չը տեսնել ասելով. «ժամը հայլփ ա, որ էտ դայդի քահանան նի մտնի». ու ժողովուրդը իր մատաղը մորթում է, աղօթում և հեռանում։ Այնուհետև համախօսական է կազմվում, լիազօրներ ընտրվում, որպէսզի սրանք գնան Թիֆլիս բողոքեն առաջնորդին, հարկ եղած դէպքում նաև Վեհ. Կաթողիկոսին՝ այդ քահանային կարգալուծելու։ Յուսով ենք, որ Թեմակալ առաջնորդը լուրջ ուշադրութիւն կը դարձնի և իր անաչառ քննիչի միջոցով գիւղացիների միանգամայն արդար պահանջին բաւարարութիւն կը տայ։

Գիւղացի

ԹՈՒՐՔԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՍՈՒԽՈՒՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

—

Սուխումի շրջանը, սկսած 1880 թւից, սիստեմատիկ կերպով լցվել է գաղթականներով Թիւրքիայից։ Գաղթականները բռնել են մեծ մասամբ ծովափնեայ և ճահճոտ տեղերը։ Տարիների ընթացքում անդուլ աշխատանքը իր հսկայական գործն է կատարում։ Լցվում են ճահիճները, բացվում անտառները և ասպարէզ գալիս ծխախոտի արտերը, որոնք մատակարարում են ամբողջ շրջանի առևտրի ամենագլխաւոր առարկան՝ ծխախոտը։ Շնորհիւ ծխախոտի արտահանութեան Սուխումը աննշան գիւղաքաղաքից դառնում է այդ շրջանի կենտրոնական քաղաքը։ Կարիք է զգացվում Նաւահանգստի, սկսվում է գործը. բայց ռուս-ճապօնական պատերազմի հասցրած տնտեսական զօրեղ հարուածի մի մասն էլ Սուխումին է ընկնում և նաւահանգստի կառուցումը յետաձգվում է։ Այսպիսով գլխաւորապէս շնորհիւ Թիւրքահայ գաղթականների Սուխումի առևտուրը մեծ զարկ է ստանում։ Թւում է, թէ ամեն կողմից աջակցութիւն պիտի ցոյց տրվի այդ ժրաջան աշխատաւորներին։

Սակայն մենք հակառակն ենք տեսնում։ Գօլիցինի ժամանակներն էին։ Մի գեղեցիկ օր այդ աշխատանքի ժրաջան զաւակները նեղն են լծվում։ Կամ ընդունեցէք միանգամայն անտանելի պայմաններով ռուսահպատակութիւն, կամ գաղթեցէք յետ։ Ահա դժուարին կացութիւն։ Շարժվում են Թիւրքահայ գաղթականները։ Սուխումը, որի առևտրի զարգացման գլխաւոր սիւնը այդ գաղթականութիւնն էր, նոյնպէս ոտքի է կանգնում։

Դիմում են կարող և ժողովրդի ցաւերով հետաքրքրվող ու գործիչ մարդկանց։ Նրանց թւում առաջ է կանգնում և «Մշակը» յանձին Ա. Քալանթարի։ Սկսվում է բանակցութիւն մինիստրութեան, տեղական կառավարական ներկայացուցիչների և գաղթականների ներկայացուցիչների միջև։ Շնորհիւ գաղթականների պաշտպանների՝ գործը աջող ընթացք է ստանում։ Նրանց 10 տարի ժամանակ է տրվում մտածելու, խորհելու և վերջնական պատասխան տալու։

Այդ օրվանից անցել են 6—7 տարի, ժամանակամիջոցը լրանալու մօտ է։ Գաղթականները կապվել են հողի հետ. հսկայական աշխատանք է թափվել նրանց կողմից։ Արդեօք չէի՞ն ցանկանայ մեր Կովկասի ներկայացուցիչ Պետ. Դումայի յարգոյ անդամները ուշադրութիւն դարձնել այդ գաղթականութեան վրա և այդ առիթով մի հարցապնդում ներկայացնել Դումային։ Համոզված ենք, որ Ա. Քալանթարը ուրախութեամբ նրանց օգտակար ցուցմունքներ կը տայ այդ առիթով։ Սպասենք և յուսանք։

Յարութիւն

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ*)

—

Մայիսի 30-ին թեմակ. դպրանոցի դահլիճում կայացաւ Երևանի թեմակ. պատգամաւորների 6-րդ և վերջին նիստը։ Դպրոցի տեսուչ Արշ. Չիլինգարեան կարդում է 1909—10 ուս. տարվայ հաշիւը, որի մասին դժբաղդաբար չենք կարող երկար կանգ առնել, որովհետև «գործերի» մէջ չը կար Ա. Չիլինգարեանի զեկուցումը։ Ամենաաչքի ընկնող նորութիւնը այդ զեկուցման այն էր, որ անցեալ ուսումնական տարում աշակերտներին աւանդվել է և Թուրքերէն լեզուն և որ ուսուցիչները ամեն կերպ աշխատել են, որ աշակերտները հմտանան գրաւոր աշխատանքների մէջ։ Արշակ Չիլինգարեանի հաշւետւութեան ընթերցումից յետոյ եղան մի քանի առաջարկութիւններ. այսպէս Կարսի շրջանի՝ Նախիջևան գիւղի պատգամաւորը յայտնեց, որ անհրաժեշտ է, որ իրանց շրջանից, որտեղ ոչ մի դպրոց գոյութիւն չունի, չորս տղայ ընդունվեն Երևանի թեմ. դպրանոցը, որոնց ապրուստը հոգացվի նաև դպրանոցի միջոցներից։ Առաջարկութիւն եղաւ, որ հայերէնի և կրօնի աւանդումը լաւ հիմքերի վրա դրվի պետական դպրոցներում և որ թեմ. իշխանութիւնն լուրջ ուշադրութիւն դարձնէ այդ առարկաների աւանդմանը յիշեալ դպրոցներում։ Հարցապնդում եղաւ նաև Երևանի Գայիանեան դպրոցի մասին, որից յետոյ հարց բարձրացվեց ունենալ Երևանի նահանգում մի միջնակարգ օրիորդաց դպրոց 6 կամ 7 դասընթացով, իսկ տեղը որոշելը թողնել թեմ. խորհրդին։

Այնուհետև Սիր. Տիգրանեան կարդում է այն յայտարարութիւնը, որ պատգամաւորները ուղարկելու էին Վեհափառ Կաթողիկոսին։

Փոքրիկ ընդմիջումից յետոյ կայանում է թեմ. խորհրդի անդամի և թեմ. դպրոցի 6 հոգաբարձուների ընտրութիւնը։

Խորհուրդը առաջարկել էր 2-րդ նիստում իր անդամների թիւը հասցնել մինչև 12-ի։ Իսկ ժողովը գտնում է, որ 10 հոգին էլ առայժմ բաւական է։ Այդ հաշւով թեմ. խորհրդի անդամ մնում է մէկին ընտրել, որովհետև անցեալ տարվայ անձնափոխանորդները համարվում են արդէն անդամներ։ Ժողովը միաձայն բաց քուէարկութեամբ ընտրեց թեմ խորհրդի անդամ թեմ. դպրոցի տեսուչ Ա. Չիլինգարեանին։

Թեմ. դպրոցի հոգաբարձուներ ընտրվեցին Գ. Ամիրեան, Եղ. Եղիազարեան, բժ. Ար. Տէր-Գրիգորեան, Վահան Փօղոսեան, Սիր. Տէր-Մարտիրոսեան, Յ. Օհանեան։

6-րդ և վերջին նիստը վերջացաւ ժամը մօտ 2-ին։ Այդ օրը պատգամաւորները ճաշով հիւրասիրվեցին առաջնորդարանում։ Այդ ճաշկերոյթին խմվեցին Վեհափառ Հայրապետի, Խորէն վ.-ի, խորհրդի անդամների, հայ ժողովրդի, հայ մտաւորականութեան, հայ մամուլի գործիչների, քահանայութեան և այլ կենացներ։ Ճաշկերոյթը վերջացաւ ժամը 6-ին և բոլորեքեան ուրախ տրամադրութեամբ իրարից բաժանվեցին, տանելով իրանց հետ քաղցր յիշողութիւններ Թեմակ. ժողովից։

—

Երևանի թեմ. պատգամաւորական ժողովի նկարագրութիւնը լրացնելու համար աւելորդ չենք համարում այստեղ առաջ բերել կտորներ այն յայտարարութիւնից, որ պատգամաւորների ստորագրութեամբ ուղարկվեց Վեհ. Հայրապետին, և առաջ բերել «հրահանգ» վիճակային խորհուրդների մասին.

«Երևանի թեմական պատգամաւորական ժողովը խորին երախտագիտութեամբ ողջունելով Վեհափառութեանդ կրօնի ջանքերը հաստատուն և իրաւասու կազմակերպութիւն տալու թեմի ժողովրդական մարմիններին՝ թեմական խորհրդին, ժողովս լիայոյս է, որ Ձերդ Վեհափառութեան բարձր հովանու տակ և անյողդողդ պաշտպանութեամբ այս հաստատութիւնների գործունէութիւնը և իրաւունքները չեն հանդիպի արգելքների և սահմանափակումների և ազատ հնարաւորութիւն կունենան զարգանալու և ծաղկելու հայ ժողովրդի կենսական պէտքերին և գիտակցած պահանջներին ծառայելու համար։ Երևանի թեմական պատգամաւորներս աներկբայ ենք, որ Ձերդ Վեհափառութիւնը կարժանացնէ իր բարձր ուշադրութեանը և հեղինակաւոր վաւերացմանը այն որոշումները, որ պատգամաւորական ժողովը մշակել և ձևակերպել է իր այս նստաշրջանում»։

Այնուհետև այդ գրութեան մէջ յիշելով Երևանի փոխ թեմակալ Խորէն վ. Մուրադբէգեանի բարեմասնութիւնները, խնդրում է Վեհափառ Հայրապետից, որ Խորէն վարդապետին եպիսկոպոսութեան աստիճան պարգևէ. այնուհետև քիչ յետոյ շարունակում է.

«Թեմն ունի իր մուտքի աղբիւրներն և իր ելքի յօդուածները, որոնք ամենից լաւ յայտնի են և ամենից շատ կախումն ունեն նոյն ինքն թեմի ժողովրդի ներկայացուցչական մարմնից։ (Յիշվում են աղբիւրները և ելքի յօդուածները). Աչքի առաջ ունենալով թեմական հաստատութեանց անհրաժեշտ մասնակցութիւնը թեմական ելմուտքը կազմելու գործում, այլ և մինչև 1910 թ. վերջը մնացած ժամանակամիջոցի կարճութիւնը, թեմական պատգամաւորական ժողովը լիազօրեց թեմական խորհրդին կազմել առաջիկայ 1911 թ. թեմական ելմտի նախահաշիւը՝ 1910 թւի օրինակը աչքի առաջ ունենալով և մատուցանել Ձերդ Վեհափառութեան վաւերացմանը»։

Այնուհետև ցանկութիւն է յայտնվում, որ Վեհափառը Էջմիածնում մի ժամանակաւոր կենտրոնական խորհուրդ հրաւիրէ բոլոր թեմական ներկայացուցիչներից ծխական կանոնադրութիւնը վերջնականապէս խմբագրելու համար։ Յայտարարութիւնը վերջանում է հետևեալ ցանկութեամբ.

«Միևնոյն ժամանակ աչքի առաջ ունենալով ռուսահայոց թեմերի խիստ անհաւասար մեծութիւնը, ժողով իր պարտքն է համարում առանձնապէս շեշտելու, որ Երևանի թեմական խորհրդին թեմիս հայ ազգաբնակութեան համեմատ ներկայացուցիչներ ունենալու իրաւունք պէտք է տալ»։

Հրահանգ

Վիճակ. կամ շրջան. խորհուրդների մասին

Գաւառական պատգամաւորներից շատերը, մասնաւորապէս Ալէքսանդրապոլի պատգամաւորները, գրաւոր զեկուցում էին բերել իրանց հետ թեմական պատգամաւորական ժողովի անունով, որի մէջ ի միջի այլոց պահանջ էին դրել, որ անհրաժեշտ է, թեմական խորհրդին իբրև օժանդակ մարմին, գաւառներում կազմակերպվեն գաւառային կամ վիճակային խորհուրդներ, որոնք վարելու են վիճակի կալուածական, եկեղեցական և դպրոցական գործերը. ահա այդ զեկուցումից օգտվելով վարչական սեկցիան խմբագրել էր վիճակային խորհրդի վերաբերեալ հրահանգները, որոնք են՝

1) Վիճակային խորհուրդը կազմվում է 6 անդամից, վիճ. ժողովի ընտրութեամբ և տեղական յաջորդի նախագահութեամբ։

2) Վիճակային խորհուրդը ընտրում է իր ատենապետը։

3) Այն շրջանները, որոնք գործակալութիւններ են միայն, իւրաքանչիւրը կամ մի քանիսը միացած, կազմում են վիճակային խորհուրդ։

4) Վիճակային խորհուրդը ընտրվում է չորս տարով և նոյն եղանակով, ինչ եղանակով թեմական խորհուրդն է։

5) Վիճակային խորհրդի իրաւասութեանն են պատկանում.

ա) Կառավարել վիճակային եկեղեցական, վանական, կալուածական, վարչական և դպրոցական գործերը։

բ) Կազմել վիճակի տարեկան մանրամասն տեղեկագիրը։

գ) Ընտրել շրջանային տեսուչ, որի անմիջական հսկողութեան տակ՝ կառավարել դպրոցական գործը։

դ) Հարկաւոր դէպքում ընտրել տնտեսական վերահսկիչ՝ վիճակի տնտեսականին վերահսկելու համար։

ե) Հիմնել դպրոցներ, որոնց ապահովութեան համար կազմակերպվում է ծխական տուրք, դիմումներ է անում մասնաւոր անհատների և ընկերութիւնների։

զ) Ստանալ և ի հաստատութիւն ուղարկել թեմական խորհրդին՝ շրջանի կամ վիճակի դպրոցների հաշիւներն ու նախահաշիւները, տեղեկագրերը, հոգաբարձական և ուսուցչական մարմինների ընտրութիւնները։

է) Տարեկան մի անգամ հրաւիրել շրջանային վիճակային ժողով, որին առաջարկել նախահաշւի հաստատութիւնը, հաշիւների հաստատութիւնը և այլն։

ը) Առանց խախտելու հոգաբարձութեան ներքին իրաւասութեան սահմանները, քննում է ուսուցչական և հոգաբարձական մարմինների միջև ծագած տարաձայնութիւնները և գործի մանրամասն քննութեան ուսումնասիրութիւնը գրաւոր փաստաթղթերով և իր յատուկ րէզօլիւցիայով առաջարկում է թեմական խորհրդին ի տնօրինութիւն։

թ) Կատարել թեմական խորհրդից եկած յանձնարարութիւնները՝ շրջանի դպրոցական, տնտեսական և կալուածական խնդիրների նկատմամբ։

ժ) Հիմնում է շրջանային գրադարաններ, գիւղական ուսուցիչների համար։

ժա) Մատակարարել ուսումնական պիտոյքներ յատկապէս գիւղական դպրոցներին աւելի մեծ զեղջով։

ժբ) Կազմակերպել ամառային կուրսեր, դասախօսութիւններ՝ գիւղատնտեսութեան և մանկավարժութեան վերաբերեալ՝ և էկսկուրսիաներ։

ժգ) Իւրաքանչիւր տարի հաշիւ տալ վիճակային պատգամաւորական ժողովին և ի գիտութիւն ժողովրդի յայտարարել տպագրութեան միջոցով։

ժդ) Անել վիճակային արդիւնքներից իր ծախքերը, առնելով ամեն մի եկեղեցուց որոշ տոկոս՝ նրա եկամտին համապատասխան։

Պատգ. Մ. Տարախչեան

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

—

Ֆինլանդական օրինագիծը

Պետերբուրգ, 11 յունիսի

Պրոֆ. Գրիմմից և Ստախովիչից յետոյ խօսում է Բուտկեվիչը, որ առաջարկում է ընդունել օրինագիծն առանց փոփոխութիւններ մտցնելու և մատնանշում է, որ եթէ ընդունենք օրինագծի հակառակորդների դատողութեան մեթօդները, այն դէպքում կարելի է այնպիսի եզրակացութեան գալ, որ և Մալօրօսիային պէտք է աւտօնոմիա տրվի, վասնզի, Սերգէևիչի վկայութեամբ, Մալօրօսիան Ռուսաստանի հետ կնքել է անձնական ունիա։ Ֆինլանդիան իր կուլտուրական մակերևոյթով բոլորովին էլ Ռուսաստանից բարձր չէ կանգնած։

Սուխոտինի կարճ ճառից յետոյ հռետորների ցուցակագրութիւնը փակվում է։

Նախագահը քուէարկութեան է դնում—օրինագիծը մերժե՞լ, թէ՞ ոչ։

Ձայների ճնշող մեծամասնութեամբ մերժման բանաձևը բացասվում է։

Քուէարկութեան է առաջարկվում յօդուածային ընթերցման անցնելու բանաձևը, որ առաջարկում է մասնաժողովը։

Ցանկալի համարելով, որպէսզի Խորհրդին իրաւունք տրվի հարցնել Ֆինլանդիայի սէյմի եզրակացութիւնները Մեծ Իշխանութեանը վերաբերող օրինագծերի նկատմամբ մինչև Խորհրդի ընդհանուր ժողովից պատշաճ օրինագիծ ընդունվելը, եթէ սէյմի եզրակացութիւնը սկզբում չէ ստացված մինիստրների խորհրդի կամ Դումայի կողմից, Խորհուրդը անցնում է օրինագծի յօդուածային քննութեան։

Իշխան Օբօլենսկի 2-րդը մատնանշում է, որ ներկայ ցանկութիւնը ըստ երևոյթին նպատակ ունի լրացնել օրինագծի 7-րդ յօդուածի այն կէտը, որ ասում է. «Ֆինլանդիային վերաբերեալ օրինագծերը կարող են սէյմի եզրակացութեանը յանձնվել Դումայի որոշման ուժով»։ Իսկ Խորհրդի մասին ոչինչ ասված չէ։ Հռետորը կարծում է, որ աւելի բնական և հասկանալի կը լինէր համապատասխան ուղղումն մտցնել եօթերորդ յօդուածում, քան թէ ցանկութիւն յայտնել փոփոխելու այն, ինչ որ ընդունվում է։

Դուռնօվօն բացատրում է, որ մասնաժողովը նրա համար զանց արաւ իշխ. Օբօլենսկիի առաջարկած ուղղումները, որ անցանկալի էր գտնում մտցնել ոչ առանձին էական ուղղումներ, որպիսի հանգամանքը կարող էր ուշացնել օրինագծի քննութիւնը։

Մի քանի հռետորներից յետոյ ձայների մեծամասնութեամբ մասնաժողովի բանաձևը՝ օրինագծի քննութեանը անցնելու մասին՝ ընդունվում է։

Քուէարկութեան է դրվում օրինագծի առաջին բաժնի նախնական մասը։ Առանց վիճաբանութիւնների ընդունվում է Պետական Դումայի խմբագրութիւնը։

Ձայների ճնշող մեծամասնութեամբ անցնում են երկրորդ յօդուածի քննութեան։

Նախագահը յայտնում է, որ առաջին յօդուածի վերաբերութեամբ ստացվել է մի ուղղում 9 հոգու ստորագրութեամբ։

Նախագահը յայտնում է, որ այս բոպէիս ստացվեցին մի քանի ուղղումներ Գրիմմից, որոնց անհրաժեշտ է տպագրութեան յանձնել և ապա ուղարկել Խորհրդի անդամներին ծանօթանալու համար։

Թէթև վիճաբանութիւնից յետոյ ձայների մեծամասնութեամբ ընդունվում է առաջին յօդուածի առաջաբան մասը Դումայի խմբագրութեամբ։

Յետոյ առանց վիճաբանութիւնների ընդունվում են երկրորդ յօդուածի առաջին կէտերը Դումայի առաջին խմբագրութեամբ։

Երկրորդ յօդուածի քննութեանը անցնելու ժամանակ հանդէս է գալիս մինիստրների խորհրդի նախագահը։ (Հ. Գ.)

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Յունիսի 11-ին Դորի մեկնեց պաշտօնական գործերով Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Վատացին երկու պաշտօնեաների ուղեկցութեամբ։

◆ Այսօր Մեծ-Ղարաքիլիսայում տեղի կունենայ ամառային դասընթացքների բացումը։ Աշակերտների հետ կանոնաւոր պարապմունքները կը սկսվեն մի քանի օրից յետոյ։ Առաջին օրերը ղեկավարների ուշադրութիւնը ուղղված կը լինի դէպի գործի կազմակերպութիւնը։ Պատուիրված են անօթներ՝ զանազան տեսակի պանիրներ պատրաստելու համար մի որոշ քանակով։

◆ Թիֆլիսում հիւր է Մոսկվայի համալսարանի պրոֆէսոր Վ. Տիխոմիրովը, որ այս օրերս կը մեկնի Չակվայի թէյի տնկարանները դիտելու, նաև Բաթումի նահանգը՝ դեղօրայքի բոյսեր ժողովելու համար։

◆ Ախալքալաքից մեզ գրում են, որ Կ. Հ. Ի. Ը. տեղական ճիւղի վարչութիւնը Ախալքալաքի գաւառի կաթնագործութեան զարգացմանը նպաստած լինելու համար որոշել է այս ամառ իր միջոցներով մի գիւղացի գրագէտ երիտասարդ ուղարկել Մեծ-Ղարաքիլիսայի ամառային կուրսերը կաթնագործութիւն սովորելու։ Այդ առիթով վարչութիւնը ցանկացողներին խնդրում է դիմել իրան մինչև յունիսի 20-ը։ Յիշեալ ճիւղի վարչութիւնը պայման է դրել, որ ով նրա ծախսով սովորի, նա էլ պարտաւորվելու է առաջիկայում, նոյն ճիւղի վարչութեան ցուցմունքով, իր սովորածն ուսուցանել Ախալքալաքի շրջանի գիւղացիութեան։

◆ Սկսվել է էկսկուրսիաների սէզօնը։ Այժմ Թիֆլիսում կարելի է հանդիպել Ռուսաստանի զանազան կողմերից եկած կրթական հաստատութիւնների սաների, որոնք նպատակ ունեն ծանօթանալ Կովկասի բնական հարստութիւնների հետ։

◆ Կովկաս է գալիս անտառաբուժական-գութեան քննիչ Ա. Ֆօկը՝ Գանձակի և Քութայիսի նահանգների անտառապահական գործերը քննելու նպատակով։

◆ Պետերբուրգում երկաթուղային գործերի վերատեսուչ Նախագահութեամբ կովկասեան լեռնաշղթայով երկաթուղի կառուցանելու հարցը քննող մասնաժողովը գտաւ, որ յիշեալ երկաթուղին չէ կարող ազդել նաւթային մթերքները Գրօզնայից և Բագուից Վլադիկավկազի և կովկասեան երկաթուղային շրջանները արտահանելու այժմեան պայմանների վրա, ինչպէս նաև յիշեալ նիւթերը արտասահման արտահանելու վրա։

◆ Այսօր Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցում նշանակված է ծխական ժողով մի հոգաբարձուի ընտրութեան, հաշւետւութեան և մի քանի կարևոր ընթացիկ խնդիրների քննութեան համար։

◆ Պոստ-հեռագրական ժամանակաւոր բաժանմունք է բացված Երևանի նահանգի Դարաչիչագ ամարանոցում։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. Խորհուրդը մեզ խնդրում է տպել, որ ինքը շնորհակալութեամբ ստացել է հանգուցեալ Հերիքնազ Տէր-Միքայէլեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն Վարդան ք. Տէր-Ղևոնդեանի միջոցով տիկ. Ծաղիկ Փիրումեանից 150 ռուբ., որից 50 ր. նուիրել է ինքը տիկինը իր քոյր Մարթա Մնացականեանի կողմից յօգուտ ընկերութեան որբանոցի, իսկ 100 ր. տիկ. Նադեժդա Առաքելեանը յօգուտ ընկերութեան ընդհանուր կարիքների։ Ցանկալի էր, որ տիկնոջ բարի օրինակին հետևէին և ուրիշները։

◆ Մեզ խնդրում են յայտնել, որ մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի Խ. Բաբայեանի «Բանաստեղծութիւնների» II հատորը։

◆ Թիֆլիսի առաջին քաղաքային ապաստարանում անցեալ մայիս ամսում յանձնել են 167 հոգի 2299 անգամ։ Գիշերողները ըստ ազգութեան բաժանվում են հետևեալ կերպով. ռուսներ՝ 35 հոգի, հայեր՝ 93, վրացիներ՝ 29, լեհեր՝ 3, գերմանացի 1, թուրք՝ 1, քաղդէացի 1։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան ջանքերով վերջին ժամանակներս գլուխ եկան երեք խոշոր հասարակական խնդիրներ՝ Մուխրանեան կամուրջը, սպանդանոցը և էլեքտրական կայարանը։ Ներկայումս վարչութիւնը ձեռնարկել է նիւթեր ժողովելու քաղաքային եկամուտները աւելացնելու հարցի վերաբերութեամբ. այսպէս՝ օրինակ՝ մշակվում է նախագիծ Ծալկայից ջուր բերելու, Մաղաթեան կղզին մասնաւոր սեփականատէրերից յետ գնելու և ջերմուկախօսական կայարան հիմնելու համար։ Այս ձեռնարկութիւնների իրագործման համար մտադրութիւն կայ կնքել քաղաքային 5-րդ փոխառութիւն 20 միլիօն ռուբլի գումարի։

◆ Քաղաքային վարչութիւնը յունիսի 11-ին շտապով Թիֆլիսի նահանգապետի հաստատութեանը ներկայացրեց Դումայի որոշումը՝ յատկացնելու 575,000 ռուբլի Թիֆլիսում քաղաքային էլեքտրական կայարան հիմնելու գործի համար։ Նոյն օրը կայացաւ վարչութեան խորհրդակցութիւնը պրոֆ. Արտէմիևի հետ, ուր որոշվեց գործը յանձնել կապալառուներին մաս-մաս։

◆ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրեց Վ. Կօնիշևին հրատարակել Թիֆլիսում մի ամենօրեայ թերթ ռուսերէն՝ «Тифлисская Реклама» անունով, որի մէջ լինելու են բացառապէս յայտարարութիւններ և ռեկլամներ։ Այս լրագիրը բաժանվելու է ձրիաբար։

◆ Ծալկայից քաղաք ջուր բերելու պայմանների հետ ծանօթանալու համար Ծալկա մեկնեց պրոֆ. Արտէմիևը։

◆ Բանտարկութիւնից ազատվեց Ժող. Տան ծառայող Ֆեօդոր Դոլիձէ։

◆ Վլադիկավկազում յունիսի 7-ին ձերբակալվեց Բագուի յայտնի նաւթարդիւնաբերող Ղուրբան Բաբայեվը, որ նոյն օրն և եթ ուղարկվեց Բագուի ոստիկանապետի մօտ։ Ձերբակալութիւնը կապում են միլիօնատէր Մուսա-Նաղիեվի կառավարչի սպանութեան հետ։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Յունիսի 11-ին, առաւօտեան ժամը 7-ին, «Միր» ակցիօներական ընկերութեան ծխախոտի գործարանի բանւորները աշխատանքները դադարեցրին և ծեծեցին գործարանի վերատեսուչ Անտօնօվին։ Դէպքի տեղն եկած Թաղամասային պրիստաւը պարզեց, որ սկզբում արձակվել էին պաշտօնից 10 բանւոր, որոնք շարժումների օրերում գործադուլներով աւելացնել էին տուել իրանց ռոճիկները 30%-ով, որ ծանր բեռ էր ընկերութեան համար, որի պատճառով էլ նա արձակեց նրանց։ Այդ բանւորները, ստանալով նախնական տեղեկութիւն դեռ յունիսի 5-ին, որ նրանք ազատ են աշխատանքներից, սկսեցին աշխատել, որպէսզի ստանան 4 ամսվայ ռոճիկները իբրև պարգև։ Գործարանի վարչութիւնը չը համաձայնեց և առաջարկեց իբրև վարձատրութիւն ստանալ 3 ամսվայ ռոճիկները։ Բանւորներն այս առաջարկութիւնը իրանց հերթին մերժեցին և յունիսի 11-ին, առաւօտեան ժամը 7 ին, եկան գործարան, ինչպէս քննութիւնը պարզեց, նպատակ ունենալով իրանց փոխարէն աշխատող բանւորներին յետ կասեցնել աշխատելուց, և դիմադրութեան հանդիպելով վերատեսուչ Անտօնօվից և դռնապան Միխայլօվից՝ ծեծեցին վերջիններիս։ Վէճի ու ծեծի ժամանակ՝ բոլոր բանւորները թողին աշխատանքները և վերակսեցին միայն ուսուցչութեան առաջարկութեամբ: Անկարգութիւններին մասնակցած թիֆլիսեցիներ Գրիգոր Շաքարաշվիլի, Գէորգ Այվազեան, Գալուստ Միրզէլով, Իվան Կասաշվիլի, Ալէքսանդր Ստեփանեան, Արչիլ Թեվզաձէ, Անձէղաշվիլի, Գեօրգի Մուխատվերդելի, Ալէքսանդր Մամուլով ձերբակալված են: Քննութիւն է կատարվում:

---

*) Տես «Մշակ» №№ 118, 121, 122, 123, 124, և 126.

◆ Մայիս ամսվայ ընթացքում Թիֆլիսում տեղի են ունեցել 102 յանցագործութիւններ:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ. ԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, յունիսի 11-ին, Վրաց Ազնուականութեան թատրոնի ամառային այգում իր առաջին ներկայացումը տուեց Իտալացի յայտնի արտիստ-տրանսֆօրմատոր Օտտօնէ Ֆրանկարդին: Այս արտիստի առանձնայատկութիւնը նրանումն է, որ ներկայացումների մէջ գործող անձերը երեւում են միայն յանձին Ֆրանկարդիի, որը իր վերին աստիճանի հմտութեան շնորհիւ վայրկենապէս կերպարանափոխվում է՝ նայած տեսիլների անձնաւորութիւններին՝ համապատասխան սրանց դերերի: Բացի ներկայացումից, Ֆրանկարդին ցոյց է տալիս մի քանի ձեռնածութիւններ վարպետ կերպով: Արտիստն առաջին օրն արժանացաւ բուռն ծափերի:

—

Մեզ գրում են Զմիւռնիայից, որ ծանօթ ջութակահար Դաւիթ Դաւթեանը տուել է մի համերգ, որը անցել է շատ աջող: Տեղական հայ և թիւրք հասարակութիւնը խանդավառ ցոյցերով պատուել է տաղանդաւոր արտիստին և նուիրել է մի քանի հազար րուբլի արժեցող ջութակ:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յ. Կոստանեանի՝ «Ուղտն ու էշը», ժողովրդական առասպել, հրատարակութիւն «Ծիածանի» № 3. Բագու, գինն է 25 կոպէկ:

«Ուղտն ու Էշը» ժողովրդական մի պատմուածք է, յարմարեցված մանկական ընթերցանութեան համար:

Յ. Կոստանեանը վերածել է նրան ոտանաւորի, քառավանկ կազմով, թեթև չափով:

Պատմուածքը կարդացվում է ախորժութեամբ:

Մի քանի տեղ չափերը մեղանչում են սահմանած կազմին (օրինակ «Խոր-խոր ձոր, ոլոր մոլոր»), կամ բառերի պայմանաւոր արտաբերութեամբ են պահպանված, բայց ընդհանրապէս նրանք աջող են կազմված:

Տիպը գեղեցիկ է, հաստ թղթի վրա: Պատկերները նպաստում են ընթերցածի իւրացման մանուկների համար:

Հրատարակութիւնը արված է Գ. քահ. Տէր-Գրիգորեանի յոբելեանական գումարով: Ա. Ք.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալքալաք, 6 յունիսի

Ամսիս 13-ին Ախալքալաքում հիմք է ձրգվում տեղիս ծխական ուսումնարանների նոր շէնքի, որը լինելու է Ախալքալաքի զարդը: Այս նոր ուսումնարանը ունենալու է բոլոր թէ առողջապահական և թէ մանկավարժական յարմարութիւնները, որով 600 մատաղ աշ.-աշակերտուհիներ պիտի ազատվեն ուսումնարանի հակաառողջապահական և հակամանկավարժական ներկայ խարխուլ շէնքից:

Սրանով դիմում ենք այն բոլոր օտարաբնակ ախալքալաքցիներին կամ Ախալքալաքով հետաքրքրվող մարդկանց, որոնց սրտին մօտ է այս գործ, շտապել օր առաջ հասցնելու իրանց բարոյական և նիւթական աջակցութիւնը, որպէս զի շինարարական յանձնաժողովս հնարաւորութիւն ունենայ գլուխ բերելու այս կարևոր գործը:

Կարիք չը կայ երկար բացատրութեան. հիմնարկութիւնը սուրբ է, գործը վեհ և պահանջը անմիջական:

Շինարար յանձնաժողովի լիազօրներ՝
Վ. Շահպարոնեան, Գ. Պապայեան

—

Երևան, 7 յունիսի

Բ. Հ. Կ. Միութ. մելիօրատիվ բիւրօն նպատակ ունենալով իր ջանքերով բացված ու բացվելիք՝ բազմաթիւ գիւղական բանկերում գործավարութիւնը հաստատուն հիմքերի վրա դնել և դրանով բանկերի գոյութիւնը ապահովել, Երևանի Օգտ. Գիտ. Տարած. Ընկ. աջակցութեամբ այս յունիսի 20-ից հիմնելու է Երևանում հաշւապահական կուրսեր, որտեղ 3 շաբաթվայ ընթացքում ձրիապէս պիտի սովորեցնեն ունկնդիրներին գիւղական բանկերի հաշւապահութիւնն ու գործավարութիւնը:

Սրանով հրաւիրում ենք բոլոր ցանկացողներին նախապէս յայտնել իրանց ցանկութիւնը կուրսերը լսելու մասին (Эривань, магазинъ «Араратъ», Арш. Шахназаряну) ու ամսիս 20-ին անպայման լինել Երևանում: Ունկնդիրների թիւը կը սահմանափակվի և գերադասութիւն կը տրվի նրանց, որոնք եկած կը լինեն գիւղերից: Ցանկալի է գիւղական ուսուցիչների և վարժուհիների ներկայութիւնը: Կուրսերը աջողութեամբ անցնողներին կը տրվի պատշաճաւոր վըկայական:

Կուրսերի ղեկավար՝ Ա. Շահնազարեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 8 յունիսի

Թաւրիզում դրութիւնն անփոփոխ է այն օրվանից, երբ ռուսաց զօրքը ձերբակալեց, զինաթափ արեց և պահեց 27 նէզմիէների ծանօթ անցքի համար: Դեռ ևս յայտնի չէ թէ ինչ հետևանք ունեցան Թէհրանի հետ տեղի ունեցող բանակցութիւնները: Ասում են, որ ռուսները ուզեցել են արձակել կալանաւորված նէզմիէներին, սակայն վերջինները պահանջել են պատճառը իրանց բռնվելու և առաջարկել են, որ պարսիկ կառավարութիւնը ազատէ իրանց և պաշտպանէ իրանց պատիւը: Ամեն դէպքում հաւանականն այն է, որ քննութիւն կատարվի և յանցաւորները պատժվեն:

Մայիս ամիսը անցաւ շատ անձրևային, կարկտախառն և փոթորկալոյզ: Թաւրիզում և շրջականերում կարկուտը նուազ չափերով էր և զգալի վնաս չը հասցրեց: Տեղեկութիւններ պակասում են հեցառատ վայրերից:

Սարսափելի են Ուրմիում տեղացած կարկուտի պատճառած վնասները: 15 գիւղերի ցորենի ցանքերն ու խաղողի այգիները փչացել են: Ուրմիի մօտիկ Գեարդապատ գիւղը աւերվել է բոլորովին կարկտից: Ասում են հաւի ձուի մեծութեամբ կարկուտ է տեղացել: Դաշտում սպանվել են մանր անասուններ, վիրաւորվել են մարդիկ, մինչև անգամ մի երկու մեռնողներ ևս եղել են: Գեարդապատի քահանան և մի քանի գիւղացիներ օգնութիւն են խնդրում Թաւրիզի ղոներում: Հայկազուն

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Զինւորական մասնագէտ-բժիշկների
Երթևեկ հիւանդների համար
Վանքի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ:
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՈՊ.
Տէլէֆօն № 481.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը $9^1/_2$-ից մինչև 5-ը ցերեկվայ:

ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.:

ԲՕԺՕՎՍԿԻՅ—ներքին, բժշկութիւն ներշնչումով, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.:

ՎՆՈՒԿՕՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 2—3 ժ. ցեր.:

ԳՐԷՅՑ—աչքի հիւանդութիւն., ամեն օր 2—3 ժ.:

ՄՕՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—2 ժ.:

ԽԱՏԻՍՕՎ Ն. Դ.—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի և երեքշ. օրերից:

ՆՕՎԻՑԿԻՅ—մանկաբարձ. և կանանց հիւանդ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.:

ՍԱՐԱՓ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ., կիրակի՝ 10—12 և կէսը:

ՊԱՎԼՕՑԿԻՅ—խիրուրգիական հիւանդ., ամեն օր՝ 4—5 ժ. ցեր.:

ՏԷՐ-ԱՌԱՔԷԼԵԱՆ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.:

ԿԻՆ ԲԺ. ԻՕՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.:

ԲԱԼԴԻՆԱ-ՆՕՎԻՑԿԱՅԱ—քթի, կոկորդի և ականջի հիւ., ամեն օր՝ $11^1/_2$—$12^1/_2$ ժ. ցեր.:

ՇԱՄԱՇ—խիրուրգ. հիւ., ամեն օր՝ 12—1 ժ.:

ԶՈՒՐԴՆՕՎՍԿԻ—ջղային, հոգեկ. հիւանդ. և էլէքտրոտէրապիա., երկուշ., չորեքշ. և ուրբաթ, ցեր. ժ. 4—5-ը:

ՄԿՐՏՈՒՄԵԱՆ. — սիֆիլիս, միզասեռ., վեներ. և կաշուի, ամ. օր՝ $10^1/_2$—$11^1/_2$ ժ. առ.:

ՊՕՆԴՕԵՎ—Ջղային հիւ. և էլէքտրոտէրապիա. ամեն օր, ժամը 11—12-ը:

ԼԻՄՕՆԻ ատամնաբոյժ—ամեն օր՝ 9—$11^1/_2$ ժ. առ.:

Համախորհուրդ, օպէրացիաներ, մասսաժ, ծաղկի պատուաստումն, անալիզ, հիպնոզ, ստնդուների և ծառաների քննութիւն—առանձին վճարով: Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի:
(կ.) 356. 100—38

ԲԺ. Ե. ՄԻՆԱՍԵԱՆՑԸ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ամառվայ համար
ԱԲԱՍԹՈՒՄԱՆ
(Дача Миракова)
(օ. մ.) 711. 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Ամառը գտնվում է ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ (Կովկաս. հանք. ջրերում), որտեղ ընդունում է հիւանդներին մինչեւ սեպտեմբեր: Верхній бульваръ, д. кн. Гирей.
(ե. հ. կ.) 565. 0—13

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների ուղղմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթթումն, ղեղերի քսումն (втиранie) հայլն: Էլէքտրականութիւն բէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ: Մասսաժ էլէքտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ: Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն: Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկներ: Խորհուրդը 50 կոպ.: Ընդունելութիւնը՝ կանանց—3—$3^1/_2$ ժ., տղամարդանց—$3^1/_2$—$4^1/_2$ ժ.: Семеновская ул., № 9.
(կ. հ.) 77. 50—37

ԳՆԵՐԻ ՆԿԱՏԵԼԻ ԷԺԱՆՈՒԹԻՒՆ
Գ. Ս. ԴՕՐՕԺՆՕՎԻ
խանութներում
1) ԳԼԽԱՒՈՐ ԽԱՆՈՒԹՈՒՄ—Սօլօլակսկայա փողոցի վրա, և
2) ԵԱՐՕՍԼԱՒԵԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ—Միխայլօվսկի պր., լիւտէրականների եկեղեցու շարքում:

Իւրաքանչիւր տարի ունեցած կարգով,
ՍԵԶՕՆԸ ՇՈՒՏՈՎ ՎԵՐՋԱՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ,
ամառային բոլոր մօդային կոտորները, զգեստները՝ թէ քաթանից և թէ բամբակից պատրաստված, Սարատովեան սարպինկա և այլ սէզօնային ապրանքներ—երկու շաբաթվայ ընթացքում, այն է՝ յունիսի 14-ից մինչև 27-ը ԿԸ ՎԱՃԱՌՎԵՆ

Միանգամայն էժան գներով

Խանութի վետրինաներում բոլոր բաժանմունքներից դրված կը լինեն ապրանքների նմուշներ՝ իրանց վրա նշանակված ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ:

ԳՆԵՐԻ ՆԿԱՏԵԼԻ ԷԺԱՆՈՒԹԻՒՆ
734. 1—1

Քիշնեվի (Բեսարաբիայի նահանգ աղխատ հայերին խնամող
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ
հրաւիրում է ցանկացողներին ստանձնել ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ և ԿՐՕՆԻ դասերը ուսումնարանում, նոյնպէս և ԵԿԵՂԵՑՈՒ ԽՆԱՄԱԿԱԼԻ պաշտօնը: Խնդիրները՝ անհրաժեշտ վկայաթղթերի կամ սրանց պատճէնների հետ միասին՝ վաղօրօք ուղարկել հետևեալ հասցէով. Кишиневъ. Армянская ул.. д. № 19. Θ К. Каймакчи.

Պահանջվում է երգեցողութեան դասընթացքի (ցանկալի է Եկմալեանի սիստեմով) աւարտման վկայաթուղթ, նոյնպէս և տիրապետումն ռուսաց լեզուի:

Ցանկալի էր, որ այդ պաշտօններն բաստանձնողը լինէր սարկաւագ:

Ռոճիկ՝ յիշեալ պաշտօնների համար՝ 720 րուբ. տարեկան, առանց բնակարանի:

Հոգաբարձութիւնը հրաւիրում է նաև ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ ՎԱՐԺՈՒՀԻ 360 րուբլի ռոճիկով, առանց բնակարանի:

Աւելի մանրամասն տեղեկութիւնները կարելի է ստանալ Հոգաբարձութեան գրասենեակում:
(կ.) 731. 2—1

ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄԻ դպրոցների համար
հարկաւոր են
ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
Շամախու, Ղուբայի և Մաղրասայի համար,
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
գլխաւորապէս գիւղական դպրոցների համար:
Ցանկացողները թող դիմեն ինձ՝ Բագու, կցելով իրանց ուսման վկայականների պատճէններն ու ծառայութեան ցուցակները:
Թեմական տեսուչ՝ Ներսէս վարդապետ
(կ. հ.) 732. 3—1

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
2 զոյգ կօշիկ 5 րուբլով
Մի քանի խոշոր ֆաբրիկաներում առեւտուրը սաստ լինելու պատճառով մեզ յանձնարարվում է վաճառելու մեծաքանակ կօշիկէն $60^0/_0$ զեղջով, այսինքն ստանալով միայն աշխատավարձի մի մասը. հետեւաբար բաց ենք թողնում իւրաքանչիւրին 1 զոյգ կօշիկ տղամ. եւ 1 զոյգ կանացի—կապիչներով, նոր ձեւի, շպիլկաներով, ամուր և էլեգանտ պատրաստուածք, 15 ր. արժեցող—ՄԻԱՅՆ 5 ՌՈՒԲԼՈՎ: (Ըստ ցանկութեան կարելի է 2 զոյգ տղամ. կամ 2 զոյգ կանացի): Կօշիկն սև կամ շագանակագոյն. մեծութիւնը համարներով կամ թէ չափսով: Պատուէրները կատարվում են անմիջապէս՝ վերադիր վճ. մինչև ունեցած քանակ. սպառումը: Ճանապարհածախսքի և փաթեթի համար հաշւվում է Եւրօպ. Ռուսաստ. 55 կ., իսկ Սիբիր՝ 85 կ.: Զոյգ և աւելի զոյգ պատուիրելուց՝ ճանապարհածախսը մեր հաշւին: ԱԶՏՕՆՈՒԹԻՒՆ. — Անհամապատասխան կօշիկները յետ են վերցվում փոխելու համար և կամ թէ փողը վերադարձնելու պայմանով: Պայմանները հասցէագրել. Экспортному Дому ОБЩЕСТВО МЕРКУРІЙ, Лодзь.—26.
(13,18,23,27) (В. 35849) 684. 4—1

ՄԵԾ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ
Ծխական միդասեան երկսեռ դպրոցների համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է
ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ
Դիմել հոգաբարձութեան:
(հ. կ.) 631. 6—6

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների:
Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը:
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը:
Տփղիս, Սեմեոնօվսկայա փ. № 16.
Տէլէֆօն № 40.
(ե. ու. կ.) 984. 100—99

ՎԱՐԱԳԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ
Հա ոց Խրիմեան Հայրիկի
Օտական պարտէզում գեղանի ֆօտօ-գրաւիւր ընտիր պատկերը հատը 1 ր. 50 կ.-ի փոխարէն մեկ րուբլի մինչև յուլիսի 1-ը, այնուհետև դարձեալ 1 ր. 50 կ.:

Ցանկալի է, որ այս պատկերը տարածվի և Թիւրքահայաստանում:

Նպատակայարմար Ենւէր Յօբելեար Վարագայ ժողովրդին:

120 ՀԱՏԸ 100 ՌՈՒԲԼԻ

Դիմել՝ ТИФЛИСЪ. БЮРО ПЕЧАТИ.
Мадатовская, 5
(կ. ե. ու.) 698. 10—4

Վրաց Հրատարակչական Ընկերութեան
Ցինկօգրաֆիան
Ընդունում է ցինկ. կլիշէների պատուէրներ և պատրաստում է մաքուր և ճշգութեամբ:
Թիֆլիս, Վանքի մեծ փողոց:
(ու.կ.) 724. 2—2

ՆՈՐ ԱՌԱԻՕՏ
(Պօէմ)
ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ
Լոյս տեսաւ և վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրախանութներում:
(հ. կ.) 666. 5—4

ԲԱՂԱՔԲԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԴԱՀԼԻՃ
Վելիամինօվսկայա, № 7.
Շարունակվում է ընդունել ամեն տեսակ կահկարասիք թէ ԾԱԽԵԼՈՒ և թէ ՊԱՀԵԼՈՒ համար:
539. 10—9

Հրաւէր
Կիրակի, ամսիս 13-ին, առաւ. ժամը $11^1/_2$-ին, Զգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցում նշանակված է ծխական երրորդ ընդհանուր ժողով.
Օրակարգ.
1) Մի հոգաբարձուի ընտրութիւն:
2) Գանձանակի վերացումը:
3) Դպրոցական շէնքի վերանորոգութիւն:
4) Ընթացիկ հարցեր:
Առանձին հրաւէրներ չեն ուղարկվելու:
Հոգաբարձութիւն
(շ. կ.) 715. 2—2

Բաւալեանց Ս. գրքի
Նոր լոյս տեսած գրքեր.
1) ԿՐՕՆ առաջին բաժանմունքում. դասագիրք աշակերտների համար (բարոյախօսական առակներ և Յիսուսի կեանքից պատմուածքներ) . . 15 կ.
2) ԿՐՕՆԻ դասատուութիւնը առաջին բաժանմունքում. ուղեցոյց ուսուցիչների, ծնողների համար . . 40 կ.
Դիմել «Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրախանութներին:
(կ. հ.) 726. 3—2

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
Ս. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ
ՏՐՏՈՒՆՋՆԵՐ ու
ՄՐՄՈՒՆՋՆԵՐ
ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԷԿ
Դիմել՝ Балаханы, „Каспійск. Т-во“, Исааку Аванесянцу.
Баку, Книжн. магаз. „Сотрудникъ“.
Шуша, Баграту Теръ-Саакянцу.
Գումարով գնողներին $20^0/_0$ զեղչ:
(հ.կ.) 720. 3—2

Այգի ✤ „ԻԺԱՆԷ“ ԸՆԿ. ✤ Ճաշարան
Վրաց ամառային թատրոնին կից, մուտքը աջ կողմից՝ գալլերէայի միջով:
Ամեն օր՝ ցեր. ժամը $1^1/_2$-ից մինչև $4^1/_2$-ը և երեկ. ժ. $8^1/_2$-ից մինչև գիշ. ժ. $1^1/_2$-ը
Նուագում է Աւստրիայից եկած վիէննական կոնցերտային լարանուագ
ԿԱՆԱՆՑ ԵՐԱԺՇՏԱԽՈՒՄԲԸ
տիկին ՊԵՇԼԻ ղեկավարութեամբ:
ՃԱՇ և ԸՆԹՐԻՔ: Ճաշը ցեր. ժամը 1-ից մինչև ժամը 5-ը.—2 տես. կերակուր՝ 50 կ., 3 տես. կեր.՝ 75 կ., 4 տես. կեր.՝ 1 ր.: Տրվում է ճաշ նաև տներին համար: ԵՒՐՕՊԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ: Ճաշարանին կից կան երեք հատ նորագոյն ԲԻԼԻԱՐԴ և ՆԱՐԴԻ: Ընդունվում են պատուէրներ թէ այգում և թէ դրսի համար—ճաշանիքներ, պիկնիկներ, ճաշի, ընթրիքի և այլն, ամեն քանակութեամբ: Տեղական պատուէրների համար այգին ունի միանգամայն մեկուսացած ծածկված ռօտոնդա և բաց տարածութիւն մեծ ընկուզենիների տակ: Տրվում է վարձով սեղանատան սէրվիզ: Տէլէֆօն № 812.
ԱՅԳՈՒ ՄՈՒՏՔԸ ՁՐԻ Է: 461. 10—8

ԿՈՎԿ. I ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ
Ռ. ԴԻՒՄԱՅԻ
Թիֆլիս, Միխայլօվսկի պրօսպ. № 140.
Էլէքտրօ-մեխանիկական յատուկ արհեստանոց՝ պատրաստելու համար
ՓԵԹԱԿՆԵՐ, ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՄՈՄԱԹԵՐԹԵՐ ԵՒ ՄԵՂՈՒԱՆՈՑԱՅԻՆ ԱՅԼ ՊԱՏԿԱՆԵԼԻՔՆԵՐ:
ԲՈՒԾԱՐԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԻՍԿԱԿԱՆ ՄԵՂՈՒԱՄԱՅՐԵՐԻ:
Մեղուաբուծութեան վերաբերեալ ԳՐՔԵՐ և ՁԵՌՆԱՐԿՆԵՐ:
Սեփական մեղուանոցի մեղր
Պատկերազարդ պրէյս-կուրանտը ըստ պահանջման ուղարկվում է
ՁՐԻ
(կ.) 394. 5—5

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES»
Յունիսի 16-ին (ըստ ն. տ. յունիսի 29-ին) մեկնելու է Բաթումից առաջնակարգ «Crimée» շոգենաւը հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լոնդոն:
Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, Նիւ-Եօրկ և Շանխայ (Չինաստան), Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում, պակասեցրած գներով:
Ապրանքների և ճամապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալին, Նախկին Արծրունու գալէրէյում թիւ 127 գրասենեակը, հեռախօս թիւ 608: Գրասենեակը բաց է՝ 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, ամեն օր, բացի կիրակի օրերից: 735. 1—1

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.